1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ, 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.



ՑԻՐԿ
Ք. ԻՒՊԱՏՕՎԻ

Այսօր, երեքշաբթի, յուլիսի 1-ին կը տրվի արտիստական ներկայացում մասնակցութեամբ ցիրկի առաջնակարգ արտիստների։ 10-րդ օր միջազգային ֆրանսիական ըմբշամարտի։ Կըմբշամարտեն 3 զոյգ. I զոյգ—արաբ Ալի-Աբդուլլա և հայ ըմբիշ Կարա-Ջամուկով. II զոյգ—գերմանացի յայտնի ըմբիշ Պաուլ Հէրգարդ և ռումինացի ըմբիշ Դումէյրէսկօ. III զոյգ—Խօսրով Ցերաձէ և ֆինլանդացի ըմբիշ Գիւբնէր։ 655. 1—1

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա գնացող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ։
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) տո. 391. 100—27

ԲԺԻՇԿ
Տ. ՄԱԿԱՐԵԱՆ
Մասնագէտ վեներական, միզասեռական՝ կաշուի և սիֆիլիս հիւանդութիւնների, մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Верхній бульв., д. Зипаловой.
(օ. մ.) տո. 547. 12—11

ԲԺԻՇԿ
ԼԵՒՈՆ ԱԹԱԲԷԿԵԱՆ
Յունիսի 10-ից մինչև օգոստոսի 20-ը
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
ՇՈՒՇԻ
Լօրիս-Մելիքեան փողոց, սեփ. տուն։
(և. հ. կ.) տո. 578. 10—10

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
ՄԵԿՆԵՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
2—1

## ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԸ

### I

Հայ հասարակութեանը յայտնի է, որ անցեալ ուսումնական տարվայ ընթացքում Էջմիածնի ճեմարանի խաղաղութիւնը և անդորրութիւնը խանգարվեց մի որոշ կուսակցութեան գործ դրած թայֆայական ինտրիգների շնորհիւ։

Այդ թայֆայական ինտրիգների հեղինակները աշխատեցին խառնել գործի մէջ և ուսանողութիւնը և մասամբ աջողեցին իրանց դաւադրութեան մէջ. Նրանց նպատակն էր տապալել հոգևոր բարձր իշխանութիւնը՝ հեռացնել ճեմարանի տեսուչ Բագրատ եպիսկոպոսին և նրա տեղ տեսուչ նշանակել տալ թայֆայական շահերին անձնուէր մի անձն։ Ինտրիգանները կարողացան այնքան պղտորել ջուրը, որ նոյն իսկ ճեմարանի ուսուցչական մարմինը, մոռանալով իր բարձր կոչումը, պարտականութիւնները՝ պառակտվեց երկու և երեք մասի և սկսեց ոյժ տալ դրանով ինտրիգանների ջանքերին, որոնց միակ նպատակն էր վերադարձնել թայֆայականների համար այն երանաւէտ օրերը, երբ ճեմարանի ղեկավար հանդիսանում էր այնպիսի ապիկար և հայութեան ու հայ եկեղեցու հետ ոչ մի առնչութիւն չունեցող, հայերէնն անգամ չիմացող ինժեներ-տեխնոլոգ Ռոստոմեանի պէս անձն, կարգելով տեսուչ նրա համախոհ Ս. Տիգրանեանին։ Եւ Էջմիածնի բարձր հոգևոր իշխանութիւնը քիչ էր մնացել ընկնէր ծուղակի մէջ և գոհացումն տար ինտրիգանների իղձերին, մանաւանդ երբ այնպիսի փորձված ուսուցիչներ, որոնց մասին այն կարծիքն էր տիրում մինչև այսօր, թէ որևէ կապ չունեն թայֆայականութեան հետ, ինչպէս Մ. Աբեղեան, Ս. Կանայեան, նոյնպէս փափագ էին յայտնել գրաւորապէս, որ լաւագոյն տեսչացուն՝ Ս. Տիգրանեանն է, կամ, այլ խօսքերով, թայֆայականների հացին իւղ էին քսել։ Բարեբաղդաբար, հոգևոր բարձր իշխանութիւնը կարողացաւ չը սայթաքվել և ժամանակին կանգ առնել ու չը գլորել ճեմարանը թայֆայականութեան անդունդը։

Այնուհետև հասարակութիւնը կարծում էր, որ կեանքը ճեմարանում արդէն մտել է իր նորմալ շաւղի մէջ։ Վերջերս միայն յայտնվեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ Էջմիածնի ճեմարանի գործերի վերին և վերջնական տնօրէնն է, իր կոնդակով արձակել է ամբողջ ուսուցչական խումբը և յանձնել ճեմարանի վարչութեան հրաւիրել նոր ուսուցչական խումբ։ Անշուշտ, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիմել է այդպիսի մի արմատական և խիստ միջոցի, նա ունեցել է իր ծանրակշիռ պատճառները, որոնց մի մասը բացատրված է և կոնդակի մէջ։

Ելակէտ ունենալով այն անժխտելի դրութիւնը, որ ամէն մի հաստատութեան, վարչութեան համար կայ վերջնական մի ատեան, որ անդառնալի և վերջնական կերպով վճռում է գործերը, և ի նկատի ունենալով որ ճեմարանի վերաբերմամբ այդ վերջնական և վերին ատեանը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, մենք ընդունում ենք, որ բողոքել կաթողիկոսական կարգադրութեան դէմ անկարելի է։ Եթէ այդ կարգադրութիւնը արած լինէր ճեմարանի տեսուչը կամ սինոդը, կարելի էր և իրաւունք կար բողոքել վերին ատեանին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսն է։ Երբ մի քանի տարի առաջ Յովնանեան դպրոցի դաշնակցական հոգաբարձութիւնը արձակեց տեսչին և ամբողջ ուսուցչական խումբը, դաշնակցական թերթերը այն ժամանակ խիստ օրինաւոր էին գտնում հոգաբարձութեան այդ որոշումը, և երբ դժգոհ կողմը բողոքեց Կաթողիկոսին, իսկ սա էլ հաստատեց հոգաբարձութեան որոշումը (թողնենք մի կողմ թէ ինչ պայմանների մէջ), նրանք՝ այդ թերթերը սկսեցին աղաղակել, թէ վերջնական ատեանը, ինստանցիան արձակել է իր վճիռը, և ամենքը պէտք է խոնարհվեն այդ վճռի առաջ։

Այսօր սակայն կան մարդիկ և թերթեր, որոնք այլ երգ են երգում. աղաղակում են, թէ վճիռը անարդար է, թէ նրա դէմ բոյկոտ պէտք է յայտարարել և այլն և այլն։

Ոչ, կաթողիկոսի վճիռը վերջնական է և փոխել կարող է միայն ինքն, ուստի և ծիծաղելի են թէ բոյկոտի և բողոքելու հրաւէրները և թէ այս կամ այն ծխական ժողովի որոշումը՝ պարսաւանք յայտնել ուսուցչական խմբի արձակման դէմ.

Մեզ մօտ չը կայ պատասխանատուութեան և գիտակցութեան ճանաչումն. Վաղարշապատի պէս մի գիւղական ծխական ժողով չէ կարողանում հասկանալ այն տարրական ճշմարտութիւնը, թէ նա կարող է ժողով գումարել և քննել միայն իր ծխական հարցերը, այլ ոչ այնպիսի մի հարց, որ վերաբերում է ամբողջ ազգի իրաւասութեան։ Եւ այդ է պատճառ, որ այդպիսի բողոքները միայն ծաղրի առարկայ են դառնում և իսկոյն մատնում իրանց թայֆայական ոգին։

Այն սերմերը, որ տարիներ առաջ սերմանեցին այնքան առատօրէն թայֆայականները, այսօր, երբ այդ սերմերն առատ հունձ են տալիս, նրանց սերմանողները զարմանում են, փոխանակ մտածելու թէ՝ «չէ՞ որ սա մեր սերմանածն է»։

Հ. Առաքելեան

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

### ՅՈՅՆ-ԲՕԼԳԱՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

—

28 և 29 յունիսի

ԱԹԷՆՔ.—Բօլգարական դեսպան Պասսարով թագաւորին յանձնեց իր պետութեան յանձնարարական հրովարտակը և մատնանշեց Բօլգարիայի և Յունաստանի միջև բարի յարաբերութիւններ վերականգնելու անհրաժեշտութիւնը, որ նրանք իրանց մէջ բովանդակեն յարգանք և բարեացակամութիւն, որին և կարիք են զգում երկու երկրի էլ ընդհանուր բազմաթիւ շահերը։ Թագաւորը պատասխանեց, որ համամիտ է այդ ցանկութիւններին, և դեսպանը իր միսիան կատարելով, կարող է լիապէս հաւատալ թագաւորի և կառավարութեան պաշտպանութեան։

ՍՕՖԻԱ.—Թագաւորը ընդունեց յունական դեսպան Նաումին, որը յանձնեց թագաւորին իր պետութեան յանձնարարական հրովարտակը և ասաց, որ իր կառավարութեան յանձնարարութեան համաձայն, իրան իրաւունք է համարում հաւատացնել նորին մեծութեան, որ ինքը ամէն ջանք գործ կը դնի երկու հարևան պետութեան համաձայնութեան և խաղաղ զարգացման գործի համար, որոնք ունեն բազմաթիւ ընդհանուր շահեր։ Թագաւորը պատասխանեց։ «Ոգևորված նոյն զգացումներով, կարող եմ հաւատացնել ձեզ, որ իմ վստահութիւնը և իմ կառավարութեան աջակցութիւնը՝ ձեզ վրա դրված միսիան կատարելու համար, կարող էք ապահովված համարել»։

### ՀՐԴԵՀՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 և 29 յունիսի

ՏՎԵՐ.—Հրդեհը Օրշինսկի արքունական անտառներում մեծ չափեր է ընդունում։ Կրակը հանգցնելու համար եկել են 18 վաշտ զինուոր։ Չը նայած բոլոր ջանքերին, հրդեհը ծաւալվում է։ Օստաշկեվսկի և Բէժիցկի գաւառներում նոյնպէս այրվում են անտառները։

ԿՈՂՕԳՐԻՎ.—Անտառային հրդեհները Ունժայի շրջանում հետզհետէ մեծ չափեր են ընդունում։ Ձեռք առնված միջոցները անցնում են ապարդիւն։ Վնասները միլիօնների են հասնում։

ՊՍԿՕՎ.—Անտառային հրդեհների տարածման դէմն առնելու համար նահանգապետը 400 զինուոր է խնդրում։ Պսկովի գաւառում հազարաւոր դեսեատին տարածութիւն բռնող անտառները այրվում են։ Գործի են կանչված գաւառի ոստիկանական և զինուորական ոյժերը։

ՍԱՐԱՏՕՎ.—Երկու օրվայ մէջ քաղաքում այրվեց 26 տուն։

ՊՍԿՕՎ.—Այրվեց «արքունական» անտառը։ Կրակը բռնել է 15 վերստ տարածութիւն։ Հանգցնելու համար զօրք է ուղարկված։

ՍՏԱՐԱՅԱ ՌՈՒՍՍԱ.—Երկրորդ ամիսն է, որ 40 աստիճան շոգեր են կանգնած։ Գարնանացանքերը ոչնչացել են։ Անտառների և տորֆային ճահիճների հրդեհները շարունակվում են։

### ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 և 29 յունիսի

ԲԷԼԳՐԱԴ.—Յունիսի 27-ի երեկոյեան ռուսական դեսպան Հարտվիգը եկաւ աւստրօ-ունգարական միսիան, ուր ընդունվեց աւստրօ-ունգարական դեսպանի կողմից իր կաբինէտում։ Զրոյցի ժամանակ, որ տարվում էր շատ խաղաղ տոնով, Հարտվիգը յանկարծ ձեռքով բռնեց կուրծքը և ընկաւ։ Իսկոյն միջոցներ ձեռք առան նրան ուշքի բերելու։ 5 րոպէից յետոյ եկաւ բժիշկը, բայց նախ քան նրա գալը՝ Հարտվիգը վախճանվեց։ Միւս եկող բժիշկներն էլ հաստատեցին, որ մահը առաջ է եկել սրտի պայթումից։

Հօֆմէյստէր Հարտվիգի մարմինը տեղափոխվեց ռուսական միսիան։

ԲԷԼԳՐԱԴ.—Չը նայած թագաւորի ծննդեան հանդիսաւոր օրվան Բէլգրադում, Հարտվիգի մահվան առիթով ճնշված տրամադրութիւն է տիրում։ Լրագիրները խորին ցաւակցութիւն են յայտնում բոլոր սերբերի կողմից հանգուցեալի այրուն և աղջիկներին։

ԲԷԼԳՐԱԴ.—Հարտվիգի մահվան պատճառով թագաւորի ծննդեան օրվայ առիթով տրվելիք ճաշկերոյթը և պարահանդէսը յետաձգվեց։ Քաղաքը խոր սգի մէջ է Հարտվիգի մահվան պատճառով։ Տները զարդարված են սև դրօշակներով։ Թաղումը տեղի կունենայ երեքշաբթի։

ՎԻԵՆՆԱ.—Լրագիրները, խօսելով հօֆմէյստէր Հարտվիգի մահվան մասին, հաստատում են, որ նրա ազդեցութիւնը անսահման էր Սերբիայի վրա։ Հարտվիգը Աւստրօ-Ունգարիայի հակառակորդն էր, գուցէ և պանսլաւիստ էր այն մտքով, որ երազում էր բոլոր սլաւօններին Ռուսաստանի իշխանութեան տակ առնել։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Լրագիրները մեծ նշանակութիւն են տալիս Հարտվիգի մահվան։ «Պեստեր Լլօյդ» գրում է, որ յանձինս հանգուցեալի գերեզման իջաւ Բալկաններում ռուսական փորձված դիպլօմատներից մէկը։ Հարտվիգը,—ասում է լրագիրը,—պատկանում է Աւստրիայի վտանգաւոր թշնամիների թւին, բայց այդ հանգամանքը արգելք չը պէտք է հանդիսանայ նրա արժանիքները գնահատելու համար, այն մարդու, որ ունէր աչքի ընկնող եռանդ և լայն հասկացողութիւն իր գործի մէջ։

ԹԷՀՐԱՆ.—Ռեգենտ Սօվուսաւգ-ուլ-Դօվլէն այցելեց պատանի շահին, որը նախատել էր արտաքին գործերի մինիստրին թագադրութիւնից առաջ հրաժարական տալու համար և համոզել էր յետ վերցնել իր հրաժարականը։ Թագադրութիւնը լինելու է յուլիսի 8-ին։ Պատրաստութիւնները այդ առիթով վերջանում են։ Ռուսական և անգլիական դեսպանները, որ նշանակված են թագադրութեան առիթով լիազօր ներկայացուցիչներ, շահին բարձրագոյն նուէրներ կը տան։ Նոյնը կանեն և միւս պետութիւնների ներկայացուցիչները։ Թուրքիան, Բէլգիան և Սպանիան շահին շքանշաններ են տալու։

ԼՕՆԴՕՆ.—Պահպանողական լրագիրները լի են Բելֆաստից ստացված հեռագիրներով, որոնք ցոյց են տալիս, որ Ուլստէրը գտնվում է պատերազմի նախօրեակում և որ ամէն րոպէ կարող է պատերազմ պայթել։ Իսկ ազատամիտ լրագիրները, ընդհակառակը, ծաղրում են ուլստէրեան ժամանակաւոր կառավարութեան որոշումը, համարելով այն դատարկ ֆարս։

Համայնքների պալատում Գրէյը, արտաքին գործերի մինիստրութեան՝ զինման ծախքերին վերաբերեալ բիւջէն քննելու ժամանակ յայտնեց, որ Անգլիան պէտք է հոգ տանի այն մասին, որ ինքը չը նկատվի մի պետութիւն, որը աշխատում է զինուորական ծախքերը աւելացնել, այլ պէտք է ցոյց տայ, որ պաշտպանում է այն ամենը, ինչ որ տանում է դէպի զինման պակասացումը։ Գրէյը յոյս է տածում, որ Անգլիայի ջանքերի հետևանքները բարի յարաբերութիւններ կը ստեղծեն պետութիւնների հետ։

ԴՈՒՐԱՑՑՕ.—Պալատում՝ աւստրիական, իտալական, ֆրանսիական և գերմանական դեսպանների մասնակցութեամբ մի խորհրդակցութիւն կայացաւ։ Խորհրդակցութեան որոշումը յայտնի չէ։ Քաղաքում վհատութիւն է տիրում։ Շատ ազգայնականներ մեկնում են քաղաքից։ Վալօնից ստացված տեղեկութիւնները մխիթարական չեն։ Սպասում են եպիրացիների յարձակման։

ՆԷՅՎԻԴ.—Նէյվիդի լրագիրները հերքում են այն տեղեկութիւնները, թէ Նէյվիդ է բերված Վիդի արքունիքի կահ-կարասին Դուրացցօյից և երբ թէ տեղական պալատում պատրաստութիւններ են տեսնվում Ալբանիայի կառավարչին ու ամուսնուն ընդունելու համար։

ՊՕՆՏՈՒԱԶ.—Պարիզի մօտերքը ռումբեր փոխադրողների հետ միասին կալանաւորված Աբաշիձէն և Գօգելիան ժամանակաւորապէս ազատ են արձակված։

ՊԱՐԻԶ.—Սենատը միաձայն, 288 սենատորների մասնակցութեամբ, ընդունեց Պուանկարէի ճանապարհորդութեան ծախսերի գումար յատկացնելը։

ՊԱՐԻԶ.—Ազգայնականների միութեան նախագահ է ընտրված՝ հանգուցեալ Պօլ Դերուլէտի փոխարէն՝ Մօրիս Բարրէս։

ԿԱԼԿԱԹԱ.—Բողոքի միտինգ կայացաւ հնդիկներին Կանադայում բնակեցնելու մասին եղած արգելքի դէմ։ Հռետորները իրանց ճառերում ասում էին, որ բրիտանական գաղութները կռիւ են մղում հնդիկների դէմ, արգելելով նրանց օգտվել բրիտանական հպատակների իրաւունքներից։ Այսպիսի պայմաններում հնդիկները չեն կարող լոյալ լինել Անգլիայի վերաբերմամբ։

ԲԵՆԳԱԶԻ.—Գեներալ Ջիարդինա հաղորդում է Տօբրուկից, որ զօրախումբը ելաւ ապստամբների բանակը ոչնչացնելու։ Սիտիդառուդի և Սիդիբեկկադիմի մօտերքը ուժեղ ընդհարում եղաւ։ Բանակը ոչնչացվեց։ Յետոյ եկած վաշտերը տևական ճակատամարտից յետոյ մեծ կորուստներ ունեցան։

ՎԻԵՆՆԱ.—Լրագիրների ասելով, Վիեննայի համալսարանի շատ պրոֆեսորներ միջնորդել են համալսարանային ադմինիստրացիայի առաջև, որ համալսարան չը թողնեն օտարահպատակ սերբերին։

ԲԷԼԳՐԱԴ.—Եկաւ աւստրօ-ունգարական դեսպան բարօն Գիսլ։

ՎԻԵՆՆԱ.—Կայսեր կարգադրութեամբ փակվեց Սարայեվօյի սէյմի նստաշրջանը։

ՍԵՒԱՍՏՕՊՕԼ.—Ուժգին փոթորիկ է շառաչում։ Ծովը ալեկոծվում է սաստիկ։

ԿԵՄՄԵՐՆ.—Հիւանդների չը տեսնված թիւ է եկել։ Լօղարաններն ու պանսիոնները լիքն են։ Ջրերի վարչութիւնը խորհուրդ է տալիս նորեկ հիւանդներին մի շաբաթից յետոյ գալ։

ՀԱԱԳԱ.—Էլեկտրաքարշի ծառայողները ընդհանուր գործադուլ են յայտարարել։ Բերլինից եկել է 100 բանուոր՝ գործադուլաւորներին փոխարինելու։

ԳԱՍԵԼՏ.—Բաւական բարձրութիւնից ընկաւ և մեռաւ օդաչու Գէյլբէրտ։

ՍԻՄԲԻՐՍԿ.—Սկսվեց հաճարի հունձը։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ.—Սպիտակ ծովի վրա մրրիկը ջարդեց «Իօան Բօգօսլաւ» նաւը։ Նաւը փրկելու յոյս չը կայ։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ.—Հեղեղների և լեռների ձիւնը հալվելու հետևանքով Կուբան և Լաբա գետերը վարարել են անսովոր կերպով և ամէն օր ահագին վնասներ են հասցնում ազգաբնակութեան։ Ֆեօդօրօվսկ, Մայեվսկ, Նովօբաբինչեվսկ, Նեկրասօվկա և մի շարք այլ գիւղեր մեծ վնասներ են կրել։ Հեղեղը քշել է շատ անասուն, ոչնչացրել է ցանքսերն ու բանջարանոցները։

ՍՕՍՆԻՑԱ.—Աշնանացան հաճարը հասել է արդէն։ Բերքը միջակից աւելի է։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

### ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ԳԱՂՈՒԹԻ ԲԱՑՈՒՄԸ

—

Կիրակի, յունիսի 29-ին, Սրթաճալայից երեք վերստ հեռաւորութեան վրա, «Վարդիսճալա» կոչված կղզում տեղի ունեցաւ մի շատ համակրելի հիմնարկութեան օրհնութիւնը։ «Աշխատանքի և գիւղատնտեսական արհեստագիտական գաղութ» կոչված ընկերութիւնը ահա երկրորդ տարին է, որ չքաւոր և փողոցում մնացած փոքրիկներին ապաստան տալով ձգտում է այդ կարիքաւոր երեխաներին հովանաւորել և կարելոյն չափ վարժեցնել աշխատանքի, արհեստի։

Ընկերութիւնը ձեռք բերելով բոլորովին ամայի և ուշադրութիւնից վրիպած յիշեալ կղզին, որը ծածկված է գեղեցիկ անտառով, զարգացրել է այդ երկու տարվայ մէջ գեղեցիկ բանջարանոց, կացութեան վրաններ և 25 չքաւոր մանուկների առանց խտրութեան կրօնի և ազգի հովանաւորել է բնութեան գոգում։ Երեխաները ստանում են ձրի ճաշ, կացարան, հոգացողութիւն, բժշկական հսկողութիւն, կաթ, մաքուր կերակուր, մի խօսքով բոլորը, ինչ որ հարկաւոր է երեխայի հոգու և կեանքի համար։ Մեզ պատահել է մի քանի անգամ ներկայ լինել այդ գեղեցիկ վայրում և ամէն անգամ զարգացմամբ և գոհունակութեամբ ենք հեռացել, տեսնելով հիմնադիրների մարդասէր և անձնուէր վերաբերմունքը։ Մանուկներն իրանց այնքան մօտ և ծնողական վերաբերմունք են նկատում, որ բոլորովին զգում են իրանց ազատ։

Ուրախութիւնն ու խինդն երեխաների երեսից չէր բացակայում։

Եւ եթէ ասենք, որ ընկերութիւնը ոչնչից է ստեղծել այդ գեղեցիկ գործը, խրախուսանքի արժանիքը ակներև կը դառնայ։ Բարեգործ մարդիկ օգնութեան ձեռք են կարկառել. եղբ. Էնֆիաճեանները դրանց մէջ պատկառելի տեղ ունեն։

Օրհնութեան օրը, ժամը 2-ին, կղզին սկսեցին այցելել պաշտօնական և համակրող հիւրեր։ Սրանց մէջ մենք նկատեցինք փոխարքայութեան ժամանակաւոր կառավարիչ Միշլաևսկիին իր կնոջ հետ, քաղաքային վարչութեան անդամներ՝ Ժուրուլիին, Աթաբէգեանին, Ջաբարին, ուսումնար. յանձն. անդամ Քանանեանին, Կովկասի բժշկական բաժնի պարագլուխ Ֆէխներին և ուրիշներին։

Պաշտօնական օրհնութիւնից յետոյ հիւրերը հրաւիրվեցին թէյի. և ահա այստեղ, մի փոքրիկ վրանի տակ, երևան եկաւ հիւրերի քաղցրալիր վերաբերմունքը։ Ընկերութեան նախագահ արհեստագիտ. դպրոցի տեսուչ պ. Ակունեան առաջին ճառը արտասանելով արծարծեց այն միտքը, որ աշխատանքի վարժեցնելու պարտականութիւնը ընկնում է անխտիր բոլոր հասարակութեան վրա։ Մեր ընկերութիւնը համոզված է, որ մարդը իրան թշուառ չի զգայ, եթէ վարժվի աշխատանքի։ Մեր նպատակն է,—ասաց ճառախօսը,—սովորեցնել արհեստն այն չափով, որ գիւղացին կարողանայ իր կեանքում իր ձեռքով շինել այն ամենը, ինչ որ նրան հարկաւոր է. Նա կարողանայ առանց կողմնակի օգնութեան շինել իր չափը, երկաթէ պարագաները և այլն։ Ուստի մենք մեր երեխաներից աշխատում ենք դարձնել այնպիսի տարր, որ «քրտինքով ճարես քո հացը» ասացուածքը անէծք չը թւայ նրա աչքին, այլ օրհնութիւն։

Ոգևորված այդ ճառը թողեց մեծ տպաւորութիւն. քաղաքային վարչութեան անդամ Ժուրաւլին գոհունակութեամբ ընդունելով ընկ. նախագահի ճառը՝ յայտնեց այն միտքը, որ ընկերութեան կարիքները քաղաքային վարչութիւնը և քաղաքային դուման կառնէ իր սրտին մօտ և առաջին նուագ ըստ հերթին չի զլանայ նիւթական օժանդակութիւն տալ։ Մի գեղեցիկ, ոգևորված և իմաստալից ճառ արտասանեց փոխարքայութեան ժամ. կառավարիչ՝ Միշլայևսկին, խրախուսելով ընկերութեան սկսած գործը, որը միակն է ոչ միայն Կովկասում, այլ ամբողջ Ռուսաստանում։ «Ինձ գոհունակութիւն է պատճառում,—ասաց Միշլայևսկին,—այն իրականացած փաստը, որ երևան է եկել այս բարի գործում։ Այստեղ միացել են հասարակական բոլոր խաւերի ներկայացուցիչները առանց խտրութեան, և այդ երևոյթի մէջն է մեր կեանքի առաջադիմութեան գրաւականը»։

Իմանալով փոխարքայի քաղցրալիր վերաբերմունքը ամեն մի մարդասիրական գործին, հիւրերը հեռագիր խփեցին նորին պայծառափայլութեանը հետևեալ բովանդակութեամբ.

«Ողջունելով այսօր առաջին աշխատանքի և գիւղատնտեսական-արհեստ. գաղութի բացումը՝ բոլոր այսօրվայ հանդիսին ներկայ եղողները առաքում են ձերդ պայծառափայլութեան և խորին յարգանքները արժանի կոմսուհուն անկեղծ ողջոյններ և ցանկութիւններ. ցանկանում ենք երկար տարիներ կառավարէք Կովկասը, որի ազգաբնակութիւնը դէպի ձեզ տածում է ջերմ և անկեղծ սիրոյ զգացմունքներ»։ Ց.

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Դպրոցի շինութեան շուրջը

Գիւլագարակ, 22 յունիսի

Անցեալներում գրել եմ՝ գիւղումս ձեռնարկված կիսատ դպրոցական շէնքի վերսկսման մասին (հասարակութիւնը տուել է 2 տարի առաջ համախօսական հոգաբարձութեան՝ դպրոցը շինելու)։ Փայտեղէնը կտրատված է Մարցայ վանքապատկան անտառներից։ Երէկ վերջապէս որոշվեց, օգտվելով 3 օր տօն լինելուց, գնալ սայլերով և փայտերը բերել, սակայն հասարակութեան տականքները և մութ ույժերը ջանք թափեցին և թափում են խափանելու շինութեան գործը, առարկելով որ «մենք դպրոց չենք ուզում, մեզ հարկաւոր չէ», կամ «պետական ենք» ուզում և այլն, ու վիժեցնել աշխատում։ Մի ամբողջ օր գիւղամիջում աղմուկ, աղաղակ, կրքերի բորբոքումն էր տիրում, այդ մի քանի ցեցերի պատճառով, որոնք պղտորում էին համամիտ, ազնիւ գիւղացիների մտքերը...

Բայց, արդարութեան և լաւ գործի յաղթանակը ակսիոմա է։

Այդ լքման միջոցին գտնվեցին մի քանի արիներ, որոնք լծեցին իրանց սայլերը և առաջ ընկան գնացին փայտերը բերելու։ Դրանց անունները կարելի և արժանի եմ համարում արձանագրել յօրինակ այլոց և ի խրախոյս իրանց։

Լ. Շահինեան, Շ. Տէր-Վարդանեան, Գ. Թօրոսեան, Տ. և Հ. Սուքիասեաններ, Կ. Պետրոսեան, Միշա Թոթոլեան։

Ահա գիւղացիութիւնը, իր մութ ու բիրտ հակառակութեանց պատճառով որքան դժուարութիւնների է հանդիպում, որքան հակառակորդների գլուխ և բերան պիտի ջարդէ, որ կարողանայ հասարակօգուտ կուլտուրական մի ձեռնարկութիւն ներմուծել, ու գլուխ բերել գիւղում... Որքան դեռ խաւարամիտ է գիւղացի զանգուածը, որը առանց ամաչելու՝ կանգնում է հրապարակում և գոռում, թէ՝ մեզ դպրոց հարկաւոր չէ. ինչի՞ս է պէտք ուսումը. ես որ ուսում չեմ առել, պակա՞ս մարդ եմ. ես կարդացող երեխայ չունեմ» և այլն... Եւ այդպիսիները մէկ չեն, տասնեակներ են։

Որքան գործ կայ դեռ կատարելու գիւղում...

Ո՞ւր են մեր հասարակական գործիչները, գաղափարական երիտասարդները...

Գնացէ՛ք դէպի գիւղը... դէպի գիւղը...

Գիւղը քայքայվում է...

Ռ. Իսկէնտէրեան

---

### Հեղեղից առաջացած վնասներ

Մեծ-Սեօզունթլու (Արէշի գ.), 20 յուն.

Ամսիս 10-ին մեր գիւղում մի այնպիսի կարկտախառն անձրև տեղաց, որպիսին ինչպէս գիւղիս հասակաւոր ծերունիներն են պատմում, երբէք չէ տեսնված։ Կարկուտը տեւեց մօտ 5 րոպէ. նրա տուած վնասները այնքան զգալի չէին, որքան անձրևինը։ Երեք օր և գիշեր սարեր ու ձորեր գոռում-գոչում էին հոսող ջրերի ձայներից։

Հեղեղը փչացրեց բոլոր գարնանացանքը և հնձած արտերից էլ մեծ քանակութեամբ խուրձեր քշեց տարաւ։ Չը հնձած արտերից շատերը տիղմով և աւազով ծածկվեցին, որոնք այլևս չեն հնձվի։ Սաստիկ հեղեղը փոքր ու խոշոր անասունների շատ կոտորած առաջացրեց։ Տեղի ունեցան նաև մարդկային երկու զոհեր։ Դժբաղդները կամենալով անձրևից պատսպարվել՝ մտան ձորի սարալանջում գտնվող մի այրի մէջ. յանկարծ այրը ջրով լցվում է. նրանք կամենալով ազատվել խեղդամահ լինելուց, շտապում են դուրս փախչել այրից, բայց, ընկնելով ձորի միջով հոսող ջրի մէջ, խեղդամահ են լինում։ Նրանց դիակները երկու օրից յետոյ գտնում են աւազի տակից։ Գետերի ջրերը այնքան են բարձրացել, որ գիւղերի հաղորդակցութիւնները ընդհատված են առ այժմ։ Անընդհատ տեղացող անձրևների պատճառով գիւղացիները չեն կարողանում ոչ հնձած խուրձերը կրել և ոչ էլ ընդհատած հունձը վերսկսել։

Ն. ք Տէր-Յովսէփեան

---

### Կեանքը Մեծ-Ղարաքիլիսայում

Մեծ-Ղարաքիլիսա, 20 յունիսի

Սկսվել է ամառային սեզոնը։ Գիւղի փողոցներում երևում են «աւետաբեր սարեակներ»... Նորեկների թիւը չը նայած շատ սակաւ է, բայց բաւականաչափ բնակարաններ են վարձված։ Ազատ սենեակներ ունեցող տնատէրերի սրտերն «ահ ու դող» է ընկել։

Տեղիս ակումբի աւագների խորհուրդն առանձնապէս այս սեզոնին պատրաստվել է հանդիսաւոր կերպով դիմաւորելու [illegible]իր.. «կաթնատու կովերին»... քնքոյշ «հօվիկներին»։ Ռոտոնդայի շուրջը մի առանձնայատուկ շարժում, իւրատեսակ կենդանութիւն է սկսվել... Համարեա ամեն օր լսվում են գինւորական օրկեստրի զուարթ նուագները, որոնք տարածվում են գիւղի ամենախուլ անկիւններում...

Բնակարանատէրերն այս տարի կարծես երդվել են անցեալի կոպտութիւնն ու ոչ կուլտուրական վերաբերմունքն ուղղելու համար ամեն կերպ աշխատել սիրաշահել «հօվիկներին»... Որոշել են հաւատարիմ մնալ «ոչ շիշ այրվի, ոչ խորոված» թուրքական առածի իմաստին։

Գիւղիս փողոցների լուսաւորութեան խնդիրը կարծես դրականապէս լուծվելու վրա է։ Տեղս ամարանոց ունեցող յայտնի կապիտալիստ պ. Իւր. Մ. Թայիրեան դեռ անցեալ տարի խոստացել էր հասարակութեան, նուիրել միջակ մեծութեամբ մի էլեքտրական մոտոր, որի մասերն այս ամառ միայն հնարաւոր եղաւ Բաթումից տեղափոխել այստեղ։

Բացի դրանից տիկինը իր ներկայացուցչի միջոցով յայտնել է հասարակութեան, որ կաւելացնի մեքենայի ույժն այն պայմանով, եթէ գիւղն այս տարի անցկացնի փողոցներով էլեքտրական լուսաւորութիւն։ Հասարակութիւնը գոհունակութեամբ ընդունելով տիկնոջ նուէրը՝ որոշել է գործն ամբողջացնելու համար յատկացնել մօտ 4000 ռ.։

Ռեպորտեօր

---

### Եսայի Աբովեանի թաղումը

Օձուն, 20 յունիսի

Մեր գիւղն այս օրերս ունեցաւ մի խոշոր կորուստ՝ Թիֆլիսաբնակ համագիւղացի Եսայի Աբովեանի մահվամբ։ Հանգուցեալի մարմինը ամսիս 9-ին բերվեց Թիֆլիսից գիւղս և նոյն օրն իսկ յանձնվեց հողին իր տոհմական դամբարանում խուռն բազմութեան ներկայութեամբ, որ սրտագին յարգանք էր տալիս հանգուցեալի յիշատակին։

Այս առիթով աւելորդ չենք համարում յայտնել, որ հանգուցեալը—ինչպէս և Աբովեան տոհմն առհասարակ—բաւականին բարեգործութիւններ ունի արած մեր գիւղին։

1886 թ. հանգուցեալ եղբ. Զաքարիա և Բաղդասար Աբովեանները նորոգեցին, ի յիշատակ իրանց մայր Եղիսաբէթի, Օձնոյ «Խաչգունտ» ս. Աստուածածին եկեղեցին, որ VII դարի գործ է։

1909 թ., հանգուցեալ Բաղդ. Աբովեանի կտակի համաձայն, կառուցվեց նոյն եկեղեցու շուրջ գեղեցիկ քարեայ պարիսպ 3 արշին բարձրութեան. մնում էր եկեղեցու բակում ունենալ դպրոցական շէնք։

Այդ էլ 1910 թ. լրացրեց նորերս վախճանված Եսայի Աբովեանը, մօտաւորապէս ծախսելով 10,000 ռ., ի յիշատակ իր վաղամեռիկ միակ որդի Աւետիքի։ Հանգուցեալը մտադիր էր դպրոցը ապահովել, բայց այդ բարի ցանկութիւնը մնաց անիրագործելի՝ անակնկալ մահվան պատճառով։

Մեք. Տիրանեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹԻՖԼԻՍ

◆ Յունիսի 27-ին, փոխարքայի խորհրդում, հոֆմէյստէր Ն. Լ. Պետերսոնի նախագահութեամբ կայացաւ մի առանձին խորհրդակցութեան նիւթը Կախէթի խճուղին անց կացնելու մասին։ Խորհրդակցութեան մէջ պարզվեց, որ անհնար է ճանապարհը այդ դրութեամբ թողնել Նաւթլուղի րայօնում և անհրաժեշտ գտնվեց նոր ճանապարհ անցկացնել դէպի պոլիտեխնիկական ինստիտուտն ու դէպի սպանդանոցը։

◆ Արհեստաւորաց վարչութիւնը նահանգապետին ներկայացրել է 228 խնդիր Թիֆլիսի զանազան համքարութիւնների ներկայացուցիչների կողմից, որոնք խնդրում են փոխել այս տարվայ փետրվարի 27-ին նահանգապետից հաստատված պարտադիր որոշումները՝ արհեստաւորների ծառայողների նորմալ հանգստին վերաբերող, և մշակել, արհեստաւորների ծառայողների մասնակցութեամբ, նոր որոշումներ։ Արհեստաւորները իրանց այդ պահանջը բացատրում են նրանով, որ այդ որոշումից իրանք վնասվում են։

◆ Ներկայումս արհեստաւորաց վարչութիւնը անդամներ է գտնում արհեստաւորաց ակումբի համար, որի կանոնադրութիւնը նահանգապետի կողմից հաստատված է արդէն։ Կանոնադրութեան համաձայն, ակումբի անդամներ կարող են լինել ամեն տեսակի արհեստաւորներ 21 տարեկանից ոչ պակաս։ Անդամավճարն է 5 ռուբլի։

◆ Փոխարքայի դիւանատան վերատեսուչ Ն. Վ. Նիկոլսկի մի երկու ամսվայ արձակուրդով մեկնեց Թիֆլիսից։

◆ Չորեքշաբթի, յուլիսի 2-ին, փոխարքայի խորհրդում նշանակված է 1915 թ. Կովկասում գիւղատնտեսական միջոցներ ձեռք առնելու ծախքերի նախահաշւի քննութիւնը։

◆ Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը ներկայումս գտնվում է Գերմանիայում և բժշկվում է Բադ-Էլստէրում։

◆ Այս օրերս Թիֆլիսումն էր գտնվում Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր Ս. Ֆ. Պլատոնով, որ կիրակի մեկնեց Թիֆլիսից։

◆ Թիֆլիսի գարեջրագործարանների ծառայողների գործադուլը վերջացած կարելի է համարել։ Մի քանի բանւորների ռոճիկները աւելացված են։ Իսկ գարեջրի գործարանատէր Վետցէլը գործադուլի հենց երկրորդ օրը վարձեց նոր բանւորներ։

◆ Թեհրանից Թիֆլիս է եկել Մակուի խան Սուլջա խան Մակինսկին։

◆ Ե. Ս. Բիլանովա միջնորդել է Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի առաջ, խնդրելով թոյլ տալ իրան առաջիկայ սեպտեմբերի 1-ից Նախալովկայում նախապատրաստական դպրոց բանալ երկու սեռի մանուկների համար։ Տիկին Բիլանովան մտադիր է այդ դպրոցը մօտ ապագայում փոխել պրոգիմնազիայի։

### ԿՈՎԿԱՍ

◆ Երևանի «Խօսք» թերթի խմբագրութիւնը խնդրում է մեզ հրատարակել հետևեալը. «Միանգամայն անկախ պատճառներով դադարած «Խօսքի» բաժանորդները ամենամօտիկ ապագայում կը ստանան բաւարարութիւն»։

◆ Մեծ-Ղարաքիլիսայի կաթնատնտեսական դասընթացքների ունկնդիրների մեծ մասը ժողովրդական դպրոցների ուսուցիչներ են։ Պարապմունքները առաջ են գնում կանոնաւոր, լինում են դասախօսութիւններ։ Ունկնդիրների թիւը հասնում է 36-ի։

◆ Ռաչինի գաւառի Օնի գիւղի գիւղացիները առաջ շերամապահութեամբ չէին զբաղվում, բայց այժմ նրանք ձեռնարկել են գիւղատնտեսական այդ ճիւղին և աշխատում են եռանդով։ Գործը առաջ է գնում մեծ աջողութեամբ։ Այս տարի Ռաչինի և Լեչխումի գաւառներում շերամի բոժոժների մեծ բերք կայ։

◆ Շորապանի գաւառի վարկային ընկերութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը որոշել է վարկային ընկերութիւնների միութիւն կազմել։

◆ Բագուի գաւառական դատարանի բաժանմունքը վճիռ է կայացրել արտաքսելու «Ռուսօ», «Եւրոպական Կորպորացիա» և «Տէր-Ակոպով» նաւթարդիւնաբերական գործարանների բանւորներին։

### ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Рѣчь»-ը հաղորդում է, որ Պետերբուրգում գտնվող Թուրխան փաշան մի ժամից աւելի տեւող զրոյց ունեցաւ Ս. Դ. Սազոնովի հետ։ Դրանից առաջ Սազոնովը խորհրդակցութիւն ունեցաւ անգլիական դեսպանի հետ։ Այնուհետև Թուրխան փաշան այցելեց անգլիական ու ֆրանսիական դեսպաններին և երկարատև խօսակցութիւն ունեցաւ նրանց հետ։ Երեկոյեան Թուրխան փաշան ճաշեց իտալական դեսպանի մօտ։ Ենթադրում են, որ Թուրխան փաշայի միսիան որոշ չափով նպաստաւոր ելք կը ստանայ պրինց Վիդի համար։ Ամսիս 28-ին Թուրխան փաշան մեկնեց Պետերհօֆ։

◆ Աստրախանից հաղորդում են, որ կիրգիզների տափաստանում երևան է հանվել ժանտախտի մի նոր հետք Բաղաս Զագիլ գիւղում։

◆ Ֆինլանդական գործերի վարչութիւնը արտայայտվեց ֆինլանդական սէյմի արձակման դէմ։

◆ Սոյուզնիկների միջնորդութեամբ, ներքին գործերի մինիստրութիւնը մի շրջաբերականով արգելել է Կ. Ռ.-ի «Царъ Іудейскій» պիէսի ընթերցումը։

◆ Հաղորդում են, որ գրող Բոբորիկինը ծանր հիւանդ է։

◆ Պետ. Խորհրդի նախագահ Ակիմովը ոտքերի ջրգողութեամբ հիւանդ է։ Օրերս նա գնալու է Ֆինլանդիա բժշկվելու։

◆ Դատապարտված փաստաբանների անունից փաստաբաններ Ֆոլքշտէյն, Կոլմանովիչ և Անդրոնիկով վճռաբեկ բողոք են տուել։

◆ Որոշված է վերականգնել Մոսկվայի գեներալ-նահանգապետութիւնը։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Պետական առաջին Դումայի նախկին պատգամաւոր Իս. Ռամիշվիլին Կովկասի բարձրագոյն կառավարչութեան թոյլտւութեամբ վերադարձել է իր հայրենիքը և ներկայիս գտնվում է Գուրիայում։

◆ Վրաց թատրոնական գործիչների համագումարը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, որոշեց հիմնել թատրոնական գործիչների պրոֆէսիոնալ միութիւն։ Համաձայն այդ որոշման, յունիսի 16-ին վրաց դերասանները ունեցան մի ժողով՝ մշակվելիք կանոնադրութեան նախագիծը քննութեան ենթարկելու։ Ժողովը դերասան Դադիանիի պրոֆէս. միութեան մասին արած զեկուցումը լսելուց յետոյ՝ ընտրեց երեք հոգուց բաղկացած մի մասնաժողով, որը պէտք է մինչև առաջիկայ սեպտեմբեր ամիսը հաս-

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ

(Քննական վերլուծութիւն)

X

Մենք կանգնած ենք մի բաւական ուշագրաւ հարցի առաջ։

Եթէ դուք հարցնէք, օրինակ, ռուսական, գերմանական կամ ֆրանսիական նացիոնալիստներին, թէ արդեօք ո՞ր տեսակ կապիտալի շահագործութիւնը կը գերադասէին նրանք իրանց հայրենիքում՝ համերկրացու թէ օտարերկրացու, նրանք միաբերան և առանց տատանվելու կը պատասխանէին ձեզ համերկրացու կամ համաքաղաքացու կապիտալը։

Թւում է, որ հէնց միայն ժողովրդատնտեսական շահերի տեսակէտից նրանք կատարեալ իրաւացի և արդարացի են իրանց պատասխանով։ Զի որ օտարերկրացու կամ օտարահպատակի տեղափոխած կապիտալը իր որոշ տոկոսները՝ ամենից առաջ դիվիդենտների ձևով, մի կողմը թողած օտար ձեռնարկուների միւս օգուտները, նորից վերադարձնում է իր բնիկ հայրենիքը, որտեղից գաղթել է։ Մինչդեռ համերկրացու կապիտալը իր բոլոր մասերով մնում և շահեցվում է տեղական ժողովրդատնտեսութեան մէջ։

Փորձեցէք հապա նոյն հարցով դիմել վրաց նացիոնալիստներին։ Նրանք, որպէս հաւատարմատար իդէոլոգներ կալուածատէր ազնուականների, առհասարակ դէմ են կապիտալի կործանարար և շինարար մուտքին վրացական գաւառներում. իսկ երկրորդ՝ ընտրութեան դէպքում կասկած չը կայ, որ կը գերադասէին նրանք օտար եւրոպականի կապիտալը որևէ համակովկասցու (օրինակ՝ ներկայ դէպքում հայի) կապիտալից, չը նայելով որ առաջնի դրամագլխից զգալի տոկոսներ (ըստ յայտնի քիմիկոս Մենդելեևի միջին թւով 20°/₀) կրկին չուում են Եւրոպա, իսկ համակովկասեան քաղաքացուն ամբողջապէս մնում է կովկասեան ժողովրդատնտեսութեան, մասնաւորապէս տուեալ վրացական գաւառի տնտեսութեան մէջ։

Պարադո՞քս է այս։ Ի՞նչպէս բացատրել այդ տարօրինակ վերաբերմունքի դրդումները։ Զի որ, եթէ հայը չը գնէ վրաց ազնուականի վաճառքի հանած կալուածը, պիտի գնէ այն ռուսը կամ օտար եւրոպացին։ Ուրեմն ինչո՞ւ բացառիկ ատամ-կրճտոցներ հայ կապիտալիստների հասցէին։

Յաճախ ենք կարդացել ու լսել նման հարցեր մամուլի տաք պայքարի շրջանում։

Պատճառները պիտի որոնել քաղաքացիական և քաղաքական սահմաններում։ Տնտեսական շահերը պարզապէս զոհաբերվում են քաղաքական նպատակների անունով։ Բացատրենք ինչու և ինչպէս։

Անդրկովկասի որոշ կէտերում, հէնց միայն Թիֆլիսի նահանգը ձեզ օրինակ, վրացիները ամենից խիտ և յարաբերական ամենամեծ չափերով ապրում են հայերի հետ սերտ հարևանութեան մէջ։ Ազգաբնակչական յարաբերութիւնը հայերի մէջ աւելի նպաստաւոր է, քան վրացիների մէջ։ Օրինակ՝ ըստ 1897 թ. վիճակագրութեան Թիֆլիսի նահանգի հայ ազգաբնակութիւնը կազմում էր ամբողջութեան միայն 19°/₀, իսկ ըստ 1912 թւականի տուեալների, այսինքն 15 տարուց յետոյ, հայերի մասնակցութիւնը հասել էր 26,17°/₀, աճելով աւելի քան 7°/₀-ով։ Մինչդեռ վրացիների մասնակցութիւնը հաւասար էր առաջ 44,60°/₀-ի, իսկ յետոյ 41,24°/₀-ի, նուազելով 3,35°/₀-ով։ Թիֆլիսի գաւառում արդէն հայերի յարաբերական մասնակցութիւնը գերազանցում է վրացիներից, կազմելով տեղական ամբողջ ազգաբնակութեան 36°/₀, իսկ վրացիները՝ 26,17°/₀։

Հայկական տարրի իւրաքանչիւր առաջխաղացութիւն, իբրև հասարակ ազգաբնակչական փաստ, կարծես ակամայ ջուր է մաղում վրաց նացիոնալիստների «քաղաքական ծրագրի» վրա։

Ինչի՞ մէջ է ծայրանում այդ ծրագիրը։

Վրաստանի ֆեդերացիայի կամ աւտոնոմիայի «մեծ իդէայի» կամ աւելի շուտ, ինչպէս յետոյ կը տեսնենք, մեծ ու ցնորական ուտոպիայի մէջ։

Եւ ֆեօդալական կամ անտի-հայկական նացիօնալիստները ուրիշ ոչ ոք չեն, բայց եթէ հէնց իրանք՝ ֆեդերալիստները։

Այժմ պատկերացրէք ձեզ մօտաւորապէս նացիոնալիստական ատամ-կրճտոցի մոտիվները։

Իւրաքանչիւր հողավաճառման ակտ՝ վրացի կալուածատիրոջ և հայ կապիտալիստի միջև, երկայրի սրի հարուած է ֆեդերալիստների տեսակէտից։ Որովհետև այդ ակտով ոչ միայն ընկնում է վրացի ազնուականը—իսկ դա նշանակում է՝ վրաց ազգային-հասարակական կեանքի տիրող սիւնը—այլ և կորչում է կտոր-կտոր վրաց հայրենի տերրիտորիայից, աղարտվում և այլատարր բնակչութեան է վերածվում վրացական նախկին անաղարտ ու միատարր հայրենիքը։ Իսկ այդ երևոյթը, նրանց կարծիքով, խանգարում կամ արգելառիթ նշանակութիւն է ստանում Վրաստանի ապագայ քաղաքական իդէալն իրականացնելու։ Հայկական կապիտալի ամեն մի արշաւ դէպի վրացական գաւառները աղմկում, յուզում է ֆեդերալիստների բանակը։ Զի որ, մտածում են նրանք, հայ կապիտալիստները ստեղծելով վրացական գաւառներում նիւթական արժէքներ, ամրացնում են այնտեղ իրանց տիրապետութեան հիմքերը, դառնում տիրապետող դասակարգ հարազատ վրացական կեանքում, վրաց ժողովրդի ծոցում։ Աւելացրէք դրա վրա և այն ուտոպիկ ֆանտազիան, որով հաւատացնել են ջանում վրաց ֆեդերալիստները, որ իբր միայն տնտեսական շահերը չեն, որոնք հատ-հատ հայ կապիտալիստներին՝ միանգամայն անկախ իրարից՝ մղում են հողեր գնել և գործարաններ հիմնել Վրաստանում, այլ դա քաղաքական միտումներով առաջնորդվող մի կազմակերպված արշաւ է՝ դիտաւորութեամբ խանգարելու համար ֆեդերալիստների փայփայած քաղցր անուրջները։ Միայն իրանք՝ հայ կապիտալիստները չեն, որ տեղեր են գրաւում վրացական գաւառներում, այլ և ժամանակի ընթացքում պիտի աշխատեն նրանք հայկական գաւառներից մասսայօրէն բերել հայեր և վերաբնակեցնել իրանց ձեռք բերած կալուածներում ու այդպիսով կազմել հայկական գաղութներ վրացական տերրիտորիայում։

Ահա ինչ են մտածում նրանք։

Ահա ձեզ պատճառը այն՝ կարող էի ասել՝ օրգանական ատելութեան, որ տածում են վրաց ֆեդերալիստները հայկական բուրժուազիայի, յատկապէս սօցիալիստների դէմ։ Հաճեցէք կարդալ «Սախալխօ Գազեթի», ֆեդերալիզմի պաշտօնաթերթ օրգանի հետևեալ տողերը.

«Լեհաստանում լեհերը ոչ ոքի թոյլ չեն տայ իրանց ազգի ազատութեան գաղափարի դէմ խօսելու, իսկ մեզանում սօցիալիստներն են հակառակում վրաց ազատութեան իրականացման, որովհետև նրանք շատ լաւ գիտեն, որ Վրաստանի ինքնավարութիւնը հայկական պլուտոկրատիայի մահը կը լինի» (ընդգծումները իմն են)։

Եւ այդ խնդրի շուրջը վրաց ֆեդերալիստները տաք պայքար են մղում վրացական մարքսիստների դէմ, անուանելով նրանց «ազգի ներքին թշնամիներ ու դաւաճաններ», որովհետև նրանք չեն միանում ֆեդերալիստների հետ՝ «միահամուռ ույժերով Վրաստանի ինքնավարութիւն պահանջելու համար»։ Այդ ենթադրեալ պատրիոտների աչքում վրաց մարքսիստները նոյնիսկ բարեկամներ են հանդիսանում հայկական պլուտոկրատների համար, որովհետև «այդ վերջինների աջակցութիւնը մի-մի անգամ իրանց պէտք է գալիս»։

Կրկնում ենք, հայ կապիտալիստների տնտեսական գրաւումները Վրաստանում ոչ միայն խոշոր կալուածատէր ազնուականութեան անկման ուղին է հարթում—ինչպէս կանէին նաև օտար կապիտալիստները, իբրև բնական մրցութեան մի հետևանք—այլ և մի բան աւելի. հայ կապիտալիստները՝ ըստ վրաց նացիոնալիստների վերասլաց ֆանտազիայի, բաց են անում նաև ահ ու երկիւղի դուռ՝ վրաց ազգային-քաղաքական ծրագիրը խանգարելու համար։

Ահա ձեզ պատճառը այն պարադօքսալ վերաբերմունքի, որ ունեն վրաց նացիոնալիստները մեր երկրի տնտեսական առաջադիմութեան գործում. Նրանք, եթէ ընտրութեան հարց ծագէ, աւելի շուտ կը գերադասեն օտար եւրոպացու, քան իրանց համաքաղաքացի հայի, իրանց հարևան սօլոկցու կապիտալի մուտքը վրացական հայրենիքի խուլ անկիւնները։

Որքան խօսք, այնքան անմտութիւն, որքան մտքեր, այնքան թեթեւամտութիւններ են թաղնված ֆեդերալիստների փաստաբանութիւնների հիմքերում։

Նախ նրանք մեծ ատեստացիա են տալիս հայկական բուրժուազիային, վերագրելով հայ ազգային-քաղաքական գիտակցութեան բարձր աստիճան, վճռականութիւն և կազմակերպված կամք։ Ո՜հ, ո՜րչափ մեծ պատիւ է այդ մի դասակարգի հասցէին, որը չունի նրան վերագրվածների ստուէրն անգամ։ Եւ որչափ մեծ կը լինի խանդավառ պատրիոտների ուրախութիւնը, եթէ նրանք փորձով համոզվէին ասածներիս ճշդութեան մէջ։

Երկրորդ՝ հետաքրքրական էր «Սախալխօ Գազեթիից» կամ նրա փոխարէն իր քոյր «Էրիից» լսել մի փոքրիկ կոմենտար նրա տաաել տալ կանոնադրութիւնը հետևեալ ժողովին ներկայացնելու։ Միութեան գլխաւոր նպատակն է կրթութեան մէջ գտնուող դերասաններին տալ նիւթական օգնութիւն և նպաստել կարևոր դէպքերում բեմական կրթութիւն ստանալու նրանց, որոնք ցոյց կը տան այդ ասպարէզում առանձին ընդունակութիւն։ Անդամավճարը տարեկան լինելու է 10 րուբլի, իսկ մշտական եկամուտ յատուկ ներկայացումներից, բենեֆիսներից և այլ նման աղբիւրներից։

◆ Ներկայ յունիսի 26-ին 16 տարին լրանում է այն օրից, երբ անյայտ կորաւ և մինչև օրս էլ մնում է անյայտութեան մէջ վրաց հասարակական յայտնի գործիչ և գրող Իվանէ Մաչաբելին։ Այդ առիթով հանգուցեալ գրողի ամուսին Անաստ. Մաչաբելին հրատարակում է նրա անտիպ թարգմանութիւնը, որ պարունակում է իր մէջ Շէքսպիրի 8 հատ ողբերգութիւնը։

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնը Մցխէթում հիմնելու է կաթնատնտեսական և պանրագործութեան կայարան։

◆ Ոստիկանութիւնը գրաւեց վրաց «Սախալխո Փուրցելի» ամենօրեայ լրագրի № 23-ը։

◆ Թիֆլիսի ժողովրդական համալսարանի ընկ. վարչութեան կից գոյութիւն ունեցող վրացական սեկցիան որոշել է ամառվայ ընթացքում կազմակերպել էկսկուրսիաներ դէպի մօտակայ պատմական տեղերը։ Առաջին էկսկուրսիան կատարվեց անցեալ մայիսի 15-ին դէպի Մցխէթի վայրերը, իսկ երկրորդը նոյն մայիսի 25-ին դէպի «Ջվարիս Սագդարի» կոչված վանքը, որ նոյնպէս Մցխէթի մօտերքումն է գտնվում։ Երրորդ էկսկուրսիան տեղի կունենայ մօտ օրերս, որի մասին վաղօրօք կը յայտարարվի վրաց լրագիրներում։

◆ Վրաց գիւղատնտեսական «Սախալխո Գազէթի» շաբաթաթերթի ասելով, Օզուրգէթի շրջանի Խվարբէթի և Միքէլ-Գաբրիէլ գիւղերի հասարակութիւնը հիմնում է գիւղատնտեսական դպրոց երկու տարվայ կուրսով։ Շինութեան համար հողը տալիս է իշխ. Նակաշիձէն, իսկ շինութեան 8000 ր. ծախքը իր վրա է վերցնում յիշեալ գիւղերի հասարակութիւնը։ Ինչ վերաբերում է դպրոցի գոյութեան ծախքերին, այն հոգալու է կառավարութիւնը։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

### ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Սև-քաղաք, 18 յունիսի

Ամսիս 14-ին, հայ դրամատիկ ընկերակցութիւնը ռեժիսոր Վ. Թումանեանի բենեֆիսին, Սև քաղաքի Ժողովրդական Տանը ներկայացրեց 4 գործ. դրամա՝ «Աշխարհի դատաստանը» դիվերտիսմենտի բաժնով։

Խաղը անցաւ աջող։

Դիվերտիսմենտում «Տանգօ» պարի մէջ լաւ էին օր. օր. Նիկրասովա, Ասլանեան, պ. պ. Կրայնով և Լիսօչկին, նոյնպէս լաւ էին պ. Կորգանեանի «Կռունկը» (մանդոլինա) և պ. Օնիկի «Մի լար բուլբուլը» (Ջութակ)։

Հասարակութիւնը դահլիճը թողեց գոհ տպաւորութեան տակ. ներկայացման մուտքը նիւթականի կողմից աջող էր։

Մենք չենք կարող չը մատնանշել մի տխուր երևոյթի վրա, որը ճնշող տպաւորութիւն թողեց. Սարգսեանի կուպլետների ժամանակ, որոնք աջող չէին, ըստ երևոյթին անձնական գծուծ հաշիւներից դրդված մի պարոն, գուցէ օգտվելով ոստիկանութեան բացակայութիւնից, երկրորդ կարգից սուլում էր դէպի բեմը։ Լեռնիկ

Ցարսկիէ-Կոլոդցի, 24 յունիսի

Ամսիս 22-ին հայ թատերասէրները հայոց ուսումնարանի պատշգամբում ներկայացրին «Շփոթված ծառայ» վօդևիլը Աբաքեանի և «Կապկաղանի» վրացերէն Փարսը երկու գործողութեամբ Ե. Ք. Տէր-Աստուածատրեանի։ Խաղը բաւարար էր։ Այս անգամ առաջին անգամ բեմ դուրս եկան Ա. Ամիրեան, Ա. Զաքարեան և օր. Շ. Փիրղաղեան, որոնք և բաւական աջող կատարեցին իրանց դերերը։ Լաւ էր Ց. Աւետեանը հայերէն պատասխանատու դերում։

Զուտ արդիւնք մնաց մօտ 19 ր., որը յատկացվեց տեղւս գր.-ընթերցարանին։ Շնորհակալութեան արժանի է Արշակ Բաղդասարեան, որը տոմսակներ ծախեց բաւական նեղութիւններով։ Հետևեալ ներկայացումը լինելու է Վարդավառին։ Խաղալու են աշակերտները։ N. N.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 29 յունիսի

Թոյլ տուէք մի ուղղում մտցնել «Մշակի» նախընթաց համարում տպագրված իմ «Հայ-վրացական մատենագրութեան» յօդուածի մէջ։ Նախ յօդուածի սկզբում գրված է՝ «գրքի բուն նիւթը սկսվում է 16-րդ դարից», պէտք է լինի 6-րդ դարից։ Երկրորդ՝ պրոֆ. Մառի այդ գրքի մասին արված նկատողութիւնների թւում տպագրվել է այսպէս՝ «...Հայք, վիրք ասելով պէտք էր հասկանալ հայերը, վրացիները, իսկ «Հայք», «Վիրք»—Հայաստան, Վրաստան։ Այս կարդալով ընթերցողը կարող է կարծել, որ գրքի կազմողը այդպիսի տարրական բանը չի ըմբռնել, մինչդեռ Մառի առարկութիւնն ուրիշ է։ Նա ասում է թէ, որովհետև արձանագրութիւնները բոլորը գրված են գլխատառերով, իսկ Կ. Կոստանեանի գրքի մէջ տպագրված են սովորական տառերով, պէտք է կազմողը ուշադրութիւն դարձնէր, որ այն տեղերը, որ հայք, վիրք գործ է ածված ժողովուրդների մտքով, պէտք էր գրել հասարակ տառերով՝ հայք, վիրք, իսկ երբ նոյն այդ բառերը երկիրների մասին է գործածված, պէտք էր գրել՝ Հայք, Վիրք։

Գ. Լևոնեան

Ախալցխա, 23 յունիսի

Ախալցխայի հայոց դպրոցների եկ.-ծխ. հոգաբարձութեան 1911/12 թ. հաշուետուները՝ պատասխանելով «Մշակի» № 109-ում լոյս տեսած՝ Գ. Արապեանի «Հոգաբարձական ընտրութիւն» յօդուածին, «Մշակի» № 125-ում գրում են հետևեալը. 1) «Հոգաբարձութեան գործունէութիւնը քննող յանձնաժողովս իր տեղեկագիրն ու եզրակացութիւնը կազմել է մուտքի և ելքի մատեանից, պաշտօնական թղթերից և արձանագրութիւններից։ Երբէք թոյլ չէ տուել մըտացածին մի կէտ մտցնել, որը ստորութիւն է յանձնաժողովի համար»։ Այժմ տեսնենք թէ իրօք քննիչ յանձնաժողովը որքան հաւատարիմ է մնացել իր սկզբունքին։ Հոգաբարձութիւնս մեղադրվում է հետևեալ կէտերում.

1) «Հոգաբարձութիւնը սկիզբը ցանկացել էր Խուէթ գիւղի տասանորդը հաւաքելու գործը աճուրդով տալ. եղան ցանկացողներ և առաջարկեցին 600 ր.։ Սակայն հոգաբարձութիւնը յարմար գտաւ տնտեսական կերպով կառավարել, և հոգաբարձութիւնը՝ բացի վերոյիշեալ գումարը կորցնելուց՝ վնաս կրեց և մի խոշոր գումար»։

Թէև կառավարիչ Արշակ Բայպուրդեանը իր գրութիւններից մէկում գրում է, որ կան ցանկացողներ, որոնք առաջարկում են Խուէթի բերքի համար 600 ր. կապալադրամ, բայց իրողութիւնն այն է, որ ոչ մի դիմում չեղաւ հոգաբարձութեան, և մենք ստիպված եղանք յիշեալ կալուածքի արդիւնքը հաւաքել եկեղեցական բոլոր կալուածների կառավարչի միջոցով։

2) «Եկեղեցապատկան կալուածի կառավարիչ՝ Ա. Բայպուրդեանի ձեռքով ծախսված՝ Խուէթի տնտեսական կառավարութեան համար 763 ր. ելքի մէջ չէր մտցըված, բնական է՝ այդ առիթով հոգաբարձութեան կրած վնասը չը պարզվի։ Յանձնաժողովս այդ գտել էր կառավարչի թղթերից»։

Կառավարիչ Ա. Բայպուրդեանի ծախսած 763 ր. ելքի մէջ չէր մտցված, որովհետև նա, հակառակ հոգաբարձութեան պահանջի, յիշեալ գումարը ծախսելու համար փաստաթղթեր չէր ներկայացրել և մինչև վերջն էլ չը ներկայացրեց. և դա եղաւ կառավարչի արձակման պատճառներից մէկը։ Իսկ յանձնաժողովի ակնարկած վնասը առաջ է եկել այն պատճառով, որ Խուէթի տասանորդի հաւաքման պատճառով եղած ծախսերի մէջ քննիչ յանձնաժողովը հաշւել է և կառավարչի 780 ր. տարեկան ռոճիկը, որպիսի գումարը վճարվել է նրան 5 տարի շարունակ եկեղեցական բոլոր կալուածների կառավարութեան համար։ Իրօք Խուէթի տասանորդի վաճառման արդիւնքը, համաձայն հոգաբարձութեան ելմտից մատեանի՝ ծախսերը հանած, եղել է 573 ր. 57 կ.։

3) «Հոգաբարձութեան նախագահը Խուէթից ստացված մօտաւորապէս 2000 պուդ յարդը ինքնագլուխ ընծայում է սուլտացիներին, որը ի վերջոյ կառավարչի խօսքով սուլտացիք վաճառում են 1100 րուբլու»։

Իրողութիւնն այն է, որ հոգաբարձութիւնս 1912 թ. մայիսի 13-ին կայացած նիստում կառավարչի ներկայութեամբ Խուէթ գիւղից ստացված վերոյիշեալ յարդը որոշեց ծախել Կարգախի առևտրական Գաբ. Ալթունեանին 150 րուբլով՝ ստանալով նըրանից 10 ր. գրաւական և պարտաւորեցնել կառավարչին մինչև մայիսի վերջին ստանալ մնացած 140 ր. և յարդը յանձնել տիրոջը, իսկ հակառակ դէպքում զրկել Ալթունեանին գրաւականից և յարդը ծախել ուրիշին։ Բայց Ալթունեանը, տեսնելով յարդը, հրաժարվեց ընդունել իր գնած յարդը զրկվելով իր 10 ր. գրաւականից։ Իսկ հոգաբարձութիւնը ի նկատի ունենալով որ հակառակ իր ջանքի յարդը ծախելու, ուրիշ ցանկացողներ չեղան յարդը գնելու, աչքի առաջ ունենալով որ փչանում էր և հարկադրված էր աւելորդ ծախսեր անել յարդը պահելու համար, բարւոք համարեց նոյն յարդը նուիրել ոչ թէ սուլտացիներին, ինչպէս ասում է քննիչ յանձնաժողովը, այլ Սուլտայի ծխական դպրոցին։

4) «Հոգաբարձութեան նախագահը և իր մի ընկերը ուղևորվում են Թիֆլիս՝ վերցնելով հոգաբարձութեան դրամարկղից ճանապարհածախք, բայց ինչ գործի համար, յայտնի չէ արձանագրութիւնից, այլ ասված է Վեհափառ Կաթողիկոսին տեսնելու»։

1912 թ. յունիսի 10-ին կայացած հոգաբարձական ժողովի արձանագրութեան մէջ ասված է հետևեալը. «Լիազօրել, հոգաբարձութեան կողմից, նախագահող Պօղոս Մակարեանին և հոգաբարձութեան անդամ Գէորգ Արապեանին ներկայանալու Վեհափառ Կաթողիկոսին և ի դիմաց հոգաբարձութեան մի գրաւոր պատճառաբանեալ յայտարարութեամբ խնդրելու Նորին Վեհափառութիւնից առաջադրել Էջմիածնի սրբազնագոյն սինօդին վերաքննել ս. Փրկիչ եկեղեցու արդիւնքներից Գէորգեան ճեմարանին տարեկան 2000 ր. նպաստ տալու վճիռը և՝ ազատելով ս. Փրկիչ եկեղեցին յիշեալ նպաստը տալու պարտաւորութիւնից՝ առաջադրել նաև Վրաստանի և Իմերէթի վիճակային կոնսիստորիային՝ ուղարկելու Թիֆլիսի Աբասաբադեան հրապարակի վրա գտնվող տան արդիւնքից տարեկան 2000 րուբլի Ախալցխայի ծխական հոգաբարձութեան՝ այն 29,654 ր. 85 կ. գումարի հաշւին, որը սինօդի կարգադրութեամբ ծախսված է Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու արդիւնքներից, յիշեալ Էջմիածնապատկան տան շինութեան համար»։ Այս բոլորից յետոյ, կարծում ենք, պարզ է, թէ որքան քննիչ յանձնաժողովը հարազատօրէն և անաչառ կերպով օգտվել է իր տրամադրութեան տակ եղած փաստաթղթերից, և թողնում ենք ընթերցողին դատելու, թէ ինչպէս հոգաբարձութեանս վարկաբեկելու համար փաստերը խեղաթիւրում են։ Իսկ ինչ վերաբերում է վերջին հոգաբարձական ընտրութեան, այդ մասին թող խօսի ծխական ժողովի նախագահը։

Նախագահող հոգաբարձական ժողովի
Պօղոս Մակարեան
Քարտուղար՝ Ս. Ճզմաճեան

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 30 յունիսի

Կ. Հայուհեաց Բ. Ընկ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ պ. Յովհ. Մութաֆեանից 200 ր., որից 150 րուբլին Լիզիա Կարլօվնա Մութաֆեանի մշտական անդամութեան վճարը, իսկ 50 ր. ի յիշատակ հանգուցեալի յօգուտ Ընկերութեան չքաւոր աշակերտուհիների։ Վարչութիւն

Թիֆլիս, 27 յունիսի

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութիւնը ստացել է Նուխի քաղաքային վարչութիւնից՝ 100 ր., որի համար և յայտնում է նուիրատուներին իր խորին շնորհակալութիւնը։ Վարչութիւն

Թիֆլիս, 24 յունիսի

Յօգուտ Հաղբատի «Ս. Նշանեան» հոգ.-ծխ. դպրոցի ստացվեց Թիֆլիսի Թեմակալ առաջնորդ Մեսրոպ եպ.-ից՝ 25 ր., Միք. Ց. Արամեանցից 300 ր., Գրիգորիս աւ.-ք. Երզնկեանից 10 ր., ինժիներ Յովհ. Ա. Երզնկեանից 15 ր., տիկ. Հ. Ռ. Դեմուրեանից՝ 5 ր. և Ն. Երզնկեանցից 10 ր.։

Հաղբատի դպրոցի հոգաբարձութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում յիշեալ նուիրատու անձերին։

Նախագահ հոգաբարձութեան՝
Գրիգորիս աւ.-ք. Երզնկեանց

Քարվանսարա, 24 յունիսի

Կ. Հ. Բ. Ընկ. Քարվանսարայի ճիւղի վարչութիւնը ստացել է յօգուտ շրջանի դպրոցների հետևեալ նուիրատուութիւնները.

1) Քարվանսարեցի պ. պ. եղբ. Ս. և Բ. Անանեանցները նուիրում են 75 ր. ի յիշատակ իրանց հանգուցեալ հօր՝ որ այդ գումարի տոկոսներով սովորեն աշակերտ-աշակերտուհիներ Քարվանսարայի դպրոցում։

2) Թալեցի պ. Աթաբէգ Ադամեանից ստացել է 30 ր. ի յիշատակ իր մօր՝ որ նոյն դպրոցում ձրիաբար սովորեն աշակերտ-աշակերտուհիներ։

3) Քուրդլանցի Միքայէլ և Եսայի Ճաղարեանցները նուիրել են իրանց գիւղում կառուցվելիք դպրոցի տեղը 50 արշին երկայնութեամբ։

4) Թալեցի պ. Արտէմ Ենգիբարեանը նուիրել է դպրոցիս շինութեան համար իր կալ ու կալուածքը.

Կ. Հ. Բ. Ընկ. Քարվանսարայի ճիւղը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ նուիրատուներին։

Վարչութիւն

Աստրախան, 19 յունիսի

Աստրախանի Հայ Գրական-Գեղարուեստական Ընկ. հրատարակած յօբելեանական ժողովածուի համար ստացել եմ իմ անունով հետևեալ նուիրատուութիւնները.

Թիֆլիսից՝ տիկ. Եղիսաբէթ Միրզոյեան 25 ր., Ալ. Մելիք-Ազարեան 10 ր., Մ. Դոլուխանեան, Մինաս Սուլխանեան, Ե. Մութաֆեան, Մ. Խունունց, Մ. և Թ. Խանդուլեաններ՝ 5-ական ր., Տ. Էնֆիաճեան 3 ր.։ Ալէքսանդրօպոլից՝ Գ. Խոյեցեան 5 ր., Ս. Տէր-Գրիգորեան 3 ր., Եր. Տէր-Մինասեան, Աւ. Տէր-Պօղոսեան, Կ. Իսահակեան, Պ. Բաբայեան, Գ. Բունիաթեան, Տ. Կարինեան 1-ական ր.։ Արմաւիրից՝ Մ. Ճալակեան 5 ր.։ Բագուից՝ «Արշալոյս» ընկ. 10 ր., Մելիքօվ և Մամուրեան 2 ր., Տ. Պարոնեան 1 ր.։ Դերբենդից՝ Բ. Իւզբաշեան 3 ր.։ Ղուբայից՝ Մ. Սալամբէկեան 1 ր. 20 կ., Մ. Գրիգորեան 1 ր.։ Օդեսսայից բժշ. Բ. Ն. Արղութեան, 6 ր.։ Թելաւից՝ Ս. Անդրէասեան 3 րուբլի։

Այդ գումարները ես յանձնել եմ լիովին Ընկ. ներկայ վարչութեան գանձապահ պ. Դ. Տէր-Զաքարեանին։

Յայտնում եմ նուիրատուներին խորին շնորհակալութիւնս։

Վարչութեան նախկին գանձապահ՝
Ա. Շահմելիք-Ապրեսեան

## ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

### ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

I

Վան, 2 յունիսի

Նախորդ թղթակցութիւններից մէկում գրել էի, որ կառավարութիւնը կազմել է մի յանձնաժողով՝ Աբաղայում քիւրդ բէյերի ունեցած բազմաթիւ գիւղերի հողերը առնելու նրանցից ու տալու հայ ու քիւրդ երկրագործ ժողովրդին։ Այս լուրը դժբաղդաբար սխալ էր կամ սխալ էր մի մասը. կառավարութիւնը քիւրդ երկրագործներին տուել է 7—8 գիւղեր նրանցից, որոնք հասարակ քիւրդ շինականներին էին պատկանում, բայց բէյերը գրաւել էին, ինչպէս որ ուրիշ տեղերում գրաւել են հայերի հողերը։

Իսկ նոյն այդ բէյերը, կասկածելով որ հայերն էլ ի մօտոյ սեփականութեան խընդիր կարող են առաջ բերել եւրոպացի քննիչների գալուց յետոյ, ձեռնարկել են այժմ նրանց դուրս քշել Աբաղայից ու նըրանց ձեռքում գտնված հողերը յետ առնել նրանցից։ Աբաղայում բնակվում են մօտ 400 տուն հայեր, որոնք գլխաւորաբար գաղթել են Նորդուզից, հալածված աւազակ Շաքիրից ու Միր-Մհէից։ Նրանք Աբաղայում 20—30 տարիներից ի վեր շատ քրտինք ու աշխատանք են թափել, անյիշատակ տարիներից ի վեր խոպան դարձած ու կորդացած հողեր մշակել, շէնցրել են, գիւղեր են կազմել, տներ շինել, իսկ բէյերն այժմ պարտաւորեցնում են նրանց թողնել այդ ամենը ու հեռանալ և արդէն արգելել են նրանց առաջիկայ տարվայ համար ցանքսեր անելու։ Հայերը դիմեցին վալի Թահսին բէյին ու խնդրեցին որ մնան այն տեղում, որ իրանց երկրորդ հայրենիքն է եղել, բայց վալին էլ չէ քաջալերել նըրանց, ընդհակառակն ասել է առաջնորդ. փոխանորդ Մեսրոպ ք. Ճանիկեանին, թէ հայերն ինչ գործ ունեն Աբաղայում, ինչու նրանք չեն վերադառնում իրանց հայրենիքը՝ Նորդուզ։

Բայց հայերը չեն վերադառնում Նորդուզ, որովհետև այստեղ նրանց տների հետքերն անգամ չը կան և նրանց հողերը Գրաւշի բէյերի ձեռքերումն են տասնեակ տարիներից ի վեր. և ո՞վ է, որ նրանց տները պիտի վերաշինվեն ու հողերը նրանց վերադարձնէ. չեն վերադառնում, որովհետև Նորդուզը մի նեղ լեռնադաւառ է, ուր վարելահողեր շատ քիչ են, իսկ հայերը, որ տեսել են Աբաղայի ընդարձակ ու բարեբեր հողերը, անհուն արօտավայրերը, էլ Նորդուզին չեն հաւանում ու եթէ պարտաւորվեն դուրս ելնել, աւելի հաւանական է, որ գաղթեն Ռուսաստան կամ Պարսկաստան, ինչպէս ասում են։

Աբաղան ռուսական սահմանագլխին մերձ մի անհուն տարածութիւն ունեցող դաշտ է. որչափ որ նրանում ցրված են 60—70-ի մօտ փոքր գիւղեր, բայց այնուամենայնիւ դաշտը կարելի է համարել ամայի. արդէն հայերի այնտեղ բնակութիւն հաստատելուց առաջ՝ այդ դաշտը աւազակների բնակավայր էր դարձել, որոնք պահվում էին նրա մարդաչափ բարձրացած խոտերում ու մարգերում և կողոպտում անցորդներին։ Աբաղայի կոյս ու բարեբեր հողը վարձատրել է բնակիչների՝ նրա վրա թափած քրտինքն ու տարած աշխատանքը, և որչափ որ նրանք մի տասանորդ կառավարութեան, մի տասանորդ էլ երբեմն հողային վարձ քիւրդ բէյերին էին տալիս, ու բացի դրանից բէյերի համար կատարում էին ձրի աշխատանքներ և օլամներ, այնու ամենայնիւ հողը դարձեալ պարգևատրել է նրանց՝ մէկին 20—30 արդիւնքով, ու Աբաղայի գաղթական հայերն այժմ շատ բարեկեցիկ վիճակում՝ բազմաթիւ անասունների և ստացուածքների տէր են դարձել, որով շատ դժուար է նրանց հեռանալ ու վերադառնալ Նորդուզ։

Իսկ քիւրդ բէյերի ու կառավարութեան նպատակն է սահմանագլխից մօտիկ այդ գաւառը բնակեցնել քիւրդերով. սրա համար նրանք ջոկ-ջոկ նպատակներ են տածում։ Քիւրդ բէյերը կասկածում են, որ քննիչները գալիս՝ հայերը կարող են սեփականութեան կամ հողի համայնացման խնդիր առաջ բերել և նրանց ուշադրութիւնը դարձնել աւատապետական դրութեան վրա, որ տիրում է Աբաղայում և ուր բազմաթիւ գիւղեր և ընդարձակ տարածութիւններ մի քանի բէյերի սեփականութիւնն են, որոնց ինչպէս տիրացած լինելը ես բացատրեցի նախորդ նամակներիցս մէկով. իսկ քիւրդ բնակիչների մասին նրանք այդպիսի երկիւղ չունեն։

Այլ է կառավարութեան մտադրումը։ Աբաղան սահմանագլխին մօտիկ մի կարեւոր գաւառ է, և կառավարութիւնը ուզում է քրիստոնեայ մի պետութեան սահմանների վրա բնակեցնել քիւրդ, քան հայ բնակիչների՝ անշուշտ քաղաքական դիտումներով։ Վերջապէս, այսպէս կամ այնպէս, այսօր 400 տուն հայեր դուրս են շպրտվում Աբաղայից, նրանց տնտեսութիւնը քայքայվում է, գաղթականների շարանը ստուարանում է նրանցով, որոնք անպատճառ կը դիմեն Ռուսաստան։ Պիտի մտածել այսպիսի պատահականութեան մասին և կիրառել կանխազգուշական միջոցներ, թէև կարծում ենք, որ կառավարութեան ոչ-բարեացակամութեան դէպքում ոչ մէկ միջոց չը կայ հայերին բաւարարութիւն տալու և նրանց գաղթն արգելելու։ Մտրակ

II

Նոր փորձանք մը եւս...

Ծվստան, 1 յունիս

Վանի մերձակայ գիւղերէն մէկն է Ծվստանը, քաղաքէն $1^1/_2$ ժամ դէպի հարաւ, և կը բաղկանայ 87 հայ տուներէ. 5 րոպէ հեռաւորութեան վրայ կը գտնուի քիւրդաբնակ մասը՝ 50 տունէ կազմուած։

Ծվստանը իր աննպաստ պայմաններուն պատճառաւ ամենաշատ տուժողը եղաւ գազան ինքնակալի սարքած կոտորածէն և տուաւ 100-է աւելի զոհեր և անկէ ետքը ապրեցաւ տասնեակ մը տարիներ թշուառութեան մէջ, մինչև որ մանուկները իրենց հասակը առին ու պանդխտութեան ցուպին ապաւինեցան իրենց քայքայուած տնտեսականը բարելաւելու համար։ Եւ այսօր Ամերիկայի գործարաններու մէջ կը մաշին 80-ի չափ երիտասարդներ. գիւղը ամայացած է երիտասարդ բազուկներէ. կը մնան ծերեր կամ այնպիսիներ միայն, որոնք տունը մէկը չունին հոգացող։

Ահա այս անգամն ալ ատոնց դռները գիշեր ու ցերեկ ափ կառնեն ոստիկանները՝ զէնքի տակ առնելու համար։ Զինուորական նոր օրէնքը այդ կը պահանջէ եղեր... Կարծես դիտմամբ գաղթեցնել կուզեն իրենց ընտանեաց մէկ հատիկ նեցուկներն ալ։

Ահա այս պատճառաւ ոմանք կրկին փախուստ կուտան ընտանիքնին թշուառութեան մատնելով, այլք ալ կը ծախեն իրենց ապրուստի միակ միջոցը, լծկան կենդանիներն ու ոչխարը, ատով իրենց ընտանիքը ապրեցնելու, և իրենք զէնքի տակ պիտի մտնեն անիծելով դժբաղդ ճակատագիրը։

Վերջին շաբթուս մէջ մէկ $^1/_2$ ժամ դէպի արևելք գտնուող Բերդակ գիւղը կերթայ հարկահաւաք Ահմէդը՝ ընկերակցութեամբ Եւսուֆ և Դայիր ոստիկաններու, որք թէև տուրք հաւաքելու համար հոն կը կենային, բայց ութ օր ձրիապէս իրենց կենդանիներով մէկտեղ կերակրուելէ զատ՝ երկու երիտասարդ օձիքէն կը բռնեն՝ «դուք զինուոր էք» կոչելով ու ախոռի մը մէջ բանտարկել սպառնալով ուրիշներու միջամտութեամբ կազատին. բացայայտ է, որ նպատակնին կաշառք կորզել կըլլայ։

Նոյնիսկ մերձակայ քիւրդաբնակ Սևակրակ գիւղի երկու տուն հայերը արտասուօք կը պատմեն իրենց քաշած նեղութիւններն ու կծու հայհոյանքները, որ կը կրեն դրացիներէն։ Քիւրդերը չեն քաշուիր յայտնելու, թէ «գացէք մեր գիւղէն»։

Ց. Արևունի

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Թաւրիզ, 24 յունիսի

Ուրմիայի շրջանից շատ վատ հոտ է փչում. պոգրոմի ձայներ, սպանութիւն և թալան։

Թաւրիզ հասած հաւաստի տեղեկութիւններն ասում են, որ պարսիկ կոզակների և հրէայ ազգաբնակութեան միջև պատահած տարաձայնութեան հետևանքով, կոզակները թալանեցին հրէաների վաճառատուները ու զինված յարձակում գործեցին նրանց վրա. կան սպանվածներ ու բազմաթիւ վիրաւորներ։

այն կաթեգորիկ յայտարարութեան, թէ ինչպէս է նա մտածում կամ պատկերացնում իրան՝ «հայկական պլուտոկրատիայի մահը» այն դէպքում, եթէ իրականանայ «Վրաստանի ինքնավարութիւնը»։ Ի՞նչպէս, պիտի բռնի՞ ոյժով դուրս քշէք հայ կապիտալիստներին «ինքնավար» Վրաստանից թէ պիտի նոյնպիսի բռնութեամբ կոնֆիսկացիայի ենթարկէք նրա նիւթական հարստութիւնները։ Այլ կերպ «մահ» անկարելի է երևակայել հայկական ամբողջացող բուրժուազիայի համար՝ ենթադրական «ինքնավար» Վրաստանում։ Դուք հօ չէք կարող մանկական միամտութիւն ունենալ՝ հաւատալու, որ «ինքնավար» Վրաստանում կառաջանայ մի այնպիսի ուժեղ վրացական ազգային բուրժուազիա, որ յաղթական մրցութեամբ բնական մահացման կը դատապարտէ հայ բուրժուազիային։ Ոչ միայն «ինքնավարութիւն», այլև եթէ ինքնանկախութիւն անգամ ձեռք բերէ Վրաստանը, այդպիսի մի հեռանկար—վրացական ուժեղ կապիտալիստական դասակարգի առաջացման ենթադրութիւն—դատապարտված է միշտ ցնորալից երազների շարքը դասվելու, ինչպէս մենք իր տեղին փաստական դիտողութիւններով ցոյց տուինք։

Սակայն ամենամեծ ցնորքը հէնց ինքը՝ «ինքնավար Վրաստանի» գաղափարն է, ֆեդերալիստների բոլոր քաղաքական մտածումների և նախագծումների այդ կուլմինացիօն կէտը։ Տողերիս գրողը ոչ միայն կատարեալ ուտոպիական է համարում Վրաստանի քաղաքական ինքնավարութիւնը, այլև ամենամեծ հակառակորդներից մէկն է այդ գաղափարի նոյնիսկ արծարծման, ուր մնաց իրականացման։

Ուտոպիական եմ համարում այն հասարակ պատճառով, որովհետև անկարելի է երևակայել որևէ քաղաքական սիտուացիա պետութեան մէջ, որը նոյնիսկ նուազագոյն չափերով նպաստաւոր լինի այդպիսի մի գաղափարի իրականացման։ Պատկերացրէք ձեզ պետական յարաբերութիւնների դասաւորութեան ինչ մոմենտ ուզում էք։ Պետական ներկայ կարգերում ինքը տիրող ռեժիմը թոյլ չի տայ ոչ մի դէպքում. դրա մասին խօսելն իսկ աւելորդ է։ Պատկերացնենք մեզ ապագայում պետական յարաբերութիւնների այնպիսի դասաւորութիւն, ուր ազգաբնակութեան դեմօկրատական էլեմենտը ունենայ բաւական վճռական ազդեցութիւն երկրի ընթացքի վրա։ Այդ պարագայում ևս «ինքնավար» Վրաստանի իդէան կը մնայ ցնորքների ցնորքը, որովհետև թէ համակովկասեան և թէ մասնաւորապէս վրացական դեմօկրատիան թոյլ չի տայ երբէք մի այդպիսի ըէակցիօնէր ձգտման իրականացում։

Հէնց այս վերջին կէտը պայմանաւորում և բնորոշում է իմ դիրքը դէպի վրաց ֆեդերալիստների քաղաքական ծրագիրը։ Հակառակում եմ նրանց ոչ այն պատճառով, որ հայ եմ—ինչպէս նրանք, իբրև նացիօնալիստներ, պիտի այդպէս էլ ընդունեն, մտածելով որ հայերի մէջ ևս կան նրանց քաղաքական դաւանակիցներից—այլ հակառակում եմ ամբողջ հոգով այն հասարակ պատճառով, որովհետև մեր երկրի քաղաքական անդամահատումը խանգարում և վնասում է նրա տնտեսա-կուլտուրական առաջ զարգացման, դանդաղեցնում նրա հասարակական միահամուռ առաջդիմութեան ընթացքը՝ ազգային մանր կղզիացումներով, ջլատում է համաքաղաքացիական ոյժերի գործունէութեան համերաշխ ներդաշնակութիւնը և այլն։

Ազգային-քաղաքական ինքնավարութեան գաղափարը համարում եմ մի նեղ նացիօնալիստական ըէակցիօնէր ձգտում,—ահա ինչով է պայմանաւորված իմ հակառակութիւնը։

Բայց ես չը վերջացրի դեռ իմ խօսքը։

Բ. Իշխանեան

Գործի դրդապատճառը և բանի էութիւնը դեռ յայտնի չեն. միայն փաստ է, որ լուրը ընդհանուրի վրա թողեց ծանր տպաւորութիւն։

Առհասարակ Ուրմիայի շրջանի քրիստոնեայ ազգաբնակութիւնը, ի միջի այլոց նաև հայերը գտնվում են անպաշտպան վիճակում։ Այդ շրջանի յաջորդ Խորէն վարդ. Լազարեան ընդհանրապէս լաւ ընդունելութիւն էր գտել բոլոր կողմերից իբր ընդունակութեան և բնաւորութեան կողմից. և՝ նմանօրինակ դէպքերում՝ նա կարող էր ցոյց տալ պաշտպանութիւն, և նրա ներկայութիւնն այս րոպէիս անհրաժեշտութիւն է յիշեալ գաւառի հայ ժողովրդի համար։ Սակայն Էջմիածնի հոգևոր բարձր իշխանութիւնը կոպէկներ է խնայում մի այդպիսի վիճակ, ինչպիսին Ուրմին է, մատնելու համար անյայտութեան ու կորուստի....։

Նորանոր տեղեկութիւններ եթէ ստացվեն Ուրմիայից, կը գրեմ «Մշակին»։

Գիւլիզանի հայ եկեղեցին Ուրմիայի ռուսաց եպիսկոպոսը բանի գրաւել տալուց յետոյ, եկեղեցին նորոգել տուեց և փոփոխութեան ենթարկեց՝ համաձայն օրթօդօքս եկեղեցու ծիսական կանոնադրութեան։

Բռնագրաւումի հարցը Թեմակալ Մելիք-Թանգեան տեղեկագրել է մանրամասնութեամբ Ամենայն Հայոց Հայրապետին, որին է պատկանում պաշտպանութեան գործը։ Չը նայած դրան՝ առաջնորդ Ներսէս վարդ. գրեց այդ մասին Թէհրանի ռուսաց դեսպանին՝ նրա արդարադատութեան յանձնելով հայ ժողովրդի սեփականութեան պաշտպանութեան խնդիրը։

Վերջապէս հեռանում է Խոյի ռուսաց հիւպատոս Չիրիկով՝ նշանակվելով Քիրմանշահի հիւպատոս, որ սակայն պատմական Դերէքի վանքի հողերը գրաւող տխրահռչակ Սմկօյի, Գիւլիզանի եկեղեցու բռնագրաւման և այլ հարցերի վերաբերութեամբ պաշտպանողի դեր կատարեց ընդդէմ հայ ժողովրդի դարաւոր իրաւանց և շահերի։

Չիրիկովի տեղ առ այժմ նշանակվեց Թաւրիզի յայտնի Նիկոլայ Միխայլովիչ Կիրսանով։ Մենք մեծայոյս ենք շատ-շատերի հետ, որ պ. Կիրսանով՝ իբրև երիտասարդ, կրթված և կորեկտ անձն՝ օգտակար կը լինի Խոյի շրջանի հարստահարված հայութեան, ուղղութիւն ընդունելով միայն արդարասիրութիւնը։

Ատրպատականի Թեմակալ Մելիք-Թանգեան երկու օր յետոյ ուղևորվում է Ղարադաղ՝ այցելելու այդ շրջանի հայութեան և մխիթարելու նրան ու ծանօթանալու երկրի և գործերի հետ։

Ատրպատականում նշերը մեծ մասամբ փչացան. սակայն ցորենի և առհասարակ հացահատիկի բերքն սպասվում է շատ առատ։

Հայկազուն

## II

### Էնզէլիի հայոց դպրոցը

Էնզէլի, 20 յունիսի

Անցեալ 1912/13 ուսումն. տարին վերջանալուց յետոյ ուսուցիչները չը ստացան իրանց ռոճիկների մնացորդները և ստիպված եղան ամբողջ ամառը մնալ այստեղ։ Ամառվայ ընթացքում ինչ-ինչ պատճառներով ուսուցիչների մէջ թիւրիմացութիւններ են ծագում՝ առաջ բերելով լարված դրութիւն։

Սկսվում է նոր 1913/14 ուսումն. տարին նոր հոգաբարձական կազմով։ Սա էլ փոխանակ կրքերը հանդստացնելու, ուսուցիչներից որոշ մասի ցանկութիւնն է կատարում, որով դժգոհ մասին առիթ է տալիս տարվայ ընթացքում խռովութիւններ առաջ բերել, և տուժում էր դպրոցը։ Ամեն խառն ժողովում երբ ուսուցիչների մասին խօսք էր լինում, անմիջապէս հոգաբարձութիւնը հետևեալ դարձուածքն էր գործ ածում, որով դիպչում էր բարեխիղճ ուսուցչի ինքնասիրութեանը. «Ե՞րբ պիտի վերջանայ այս ուսումնական տարին, որ մենք ազատվենք. նախկին հոգաբարձութիւնը մեր գլխին ջանջալ փաթթեց»։

Ուսուցիչներից Ա. Տէր-Առաքելեանը հիւանդ էր թոքախտով։ Բժշկի վկայականի հիման վրա հոգաբարձութիւնը դիմում է նրան, թէ ինքը ազատ է այլևս և փետրվ. 1-ից չը պիտի յաճախի։ Թոքախտաւոր ուսուցիչը մնացել էր առանց դեղի և սնունդի. սպասում էր, որ ինչպէս դրութիւնը շուտ ստացվեց, այնպէս էլ փողերը շուտով կը ստանայ և հնարաւորութիւն կունենայ հեռանալ։ Սակայն անցնում են օրեր։ Ոչ մի փոփոխութիւն։ Դիմում է մի քանի անգամ, կրկին անտարբեր, և այդ այնքան ժամանակ, մինչև որ ստիպված է լինում դիմել հիւպատոսարան։ Ահագին դժուարութեամբ ստանում է և հազիւ մարտի սկիզբներին հեռանում։

Վերջանում է և 13/14 ուս. տարին։ Հոգաբարձութիւնը նախկին հոգաբարձութեան նման լռում է։ Սպասում էինք, որ ուսուցիչները մարսելու են իրանց վրա դրած մեղադրանքը, բայց ու-ուսուցիչ Արտ. Մատինեան եղաւ, որ նախ բանաւոր և ապա գրաւոր դիմումն է անում հոգաբարձութեան և խնդրում մաքրել իրան հետ հաշիւները, որպէսզի չը ստեղծվի անցեալ տարվայ դրութիւնը և կարողանայ օր առաջ հեռանալ։ Խնդրում են նրան սպասել։ Նա սպասում է։

Երկրորդ անգամ դիմում է գրաւոր։ Գրաւորն էլ մնում է անուշադիր։ Մի ամիս շարունակ ուսուցիչը դիմում է հոգաբարձութեան, որ ի դիմաց իր ստանալիք 450 րուբլուց գոնէ մի 50 ր. տան։ Տրվում է բացասական պատասխան, պատճառաբանելով գանձարկղի դատարկութիւնը. խոստանում են կազմակերպված ներկայացման արդիւնքից հատուցանել։ Ներկայացումից էլ ոչ մի կոպէկ, պատճառաբանելով աւելի կարևոր պարտքերի վճարումները։ Ուսուցիչը խնդրում է, որ գոնէ իր հաշւին %-ով վերցնեն։ Խորհուրդ են տալիս արևն-քըրտինքը %-ի չը տալ, որովհետև մեծ % են պահանջում։ Ուսուցչի բոլոր միջոցները սպառվելով, ամսիս 18-ին արդէն ստիպված դիմում է հիւպատոսարան, ներկայացնելով 450 րուբլու պահանջ։

Արմատ

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պաշտօնական աղբիւրներից հաղորդում են, որ Գերմանիան պաշտպանելու է Աւստրիայի այն բոլոր պահանջները, որոնք առաջարկվելու են Սերբիային, և պնդելու է, որ նրանք իսկութեամբ կատարվեն։

◆ «Бирж. Вѣд.»-ին հաղորդում են Հռոմից, որ Վիդը Պրենկ-Բիբ-Դօդային նշանակել է արտաքին գործերի մինիստր։ Այժմ Պրենկ-Բիբ-Դօդան բանակցութիւններ է վարում մեծ պետութիւնների ներկայացուցիչների հետ, որ աջակցեն իրան Դուրացցօն պաշտպանելու համար միջոցներ ձեռք առնելու մէջ։

◆ «Рѣчь»-ին հաղորդում են Պարիզից, որ քութայիսեցի իշխան Աբաշիձէի կալանաւորումը թիւրիմացութեան հետևանք է։ Աբաշիձէն օգնում էր իր հայրենակիցներին և այդ նպատակով մտել էր Ուստինովի բնակարանը, ուր նրան ձերբակալեցին։ Կալանաւորված Գօգելիան նոյնպէս քութայիսեցի է։ Նա Գօրօդեցկի և Ուստինովի հետ միասին տէրն էր մեխանիքական էլեքտրական արհեստանոցի։

◆ Լօնդօնից հաղորդում են, որ համայնքների պալատում լուրեր են տարածվել, որ անխուսափելի են համարում Ասկվիտի կաբինէտի անկումը և պարլամենտի արձակումը,

◆ Լօնդօնում կազմվել է սուֆրաժիստուհիների մի նոր կազմակերպութիւն, որը իր ծրագրով ու գործելակերպով միջին ճանապարհն է բռնելու կռուող և խաղաղ սուֆրաժիստուհիների մէջ։

◆ Աւստրիահպատակ սերբերը, որոնք սերբիական հիւպատոսներ են կարգված Գերմանիայի զանազան քաղաքներում, Ֆրանց-Ֆերդինանդի մահից յետոյ հրաժարական են տուել։

◆ Ամստերդամից հաղորդում են, որ Աւստրիայի նաւաստիները պոկել են սերբիական հիւպատոսարանի դրօշակը և զինանշանը։

◆ Բերլինից հաղորդում են, որ աւստրիական անցքերի ազդեցութեան տակ, բօրսան գտնվում է ճնշված դրութեան մէջ։ «Օրիենտ բանկի» արժեթղթերը ընկել են 6%-ով, աւստրիական թղթերը՝ 3, պրուսականը՝ 2%-ով։

◆ Բերլինի մամուլը ողջունում է Աւստրիայի վճիռը՝ Բէլգրադ մտնելու մասին, և խօսում է մեծ անցքեր լինելու հնարաւորութեան մասին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

### ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.։ **Պօստային գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Պօստային գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 9 ժ. 3 ր. առ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլօվօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստային գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագօններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեօզ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 14/13—11 ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բորժոմ 12 ժ. 48 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բորժոմ 8 ժ. 26 ր. երեկ.։

### ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պօստային գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստային գնացքը** № 4—9 ժ. 30 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստային գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.։ **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագօններով)—4 ժ. 41 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16/15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ 55 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
**Բժշկ. Բ. Նաւասարդեանի**
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ).
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԻՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Ց. Ց. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Ց. Ց. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—60

ԲԺԻՇԿ
**Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ**
Յունիսի 1-ից ընդունում է հիւանդներին ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ։ Էլեքտրաբուժական կաբինէտ։ Բժշկութեան ֆիզիկական միջոցներ։
(ե. ու. կ.) 400. 100—28

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**Քիշնեվի** հայոց ծխ.-դպ. համար հարկաւոր է մի փորձված
**ԱԽԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,**
շաբաթական 22 դասով (հայոց լեզու, կրօն և երգեցողութիւն), որը հմուտ պիտի լինի եկեղեցական երգեցողութեան, կարողանայ կազմել քառաձայն խումբ իր ղեկավարութեամբ տօն և կիրակի օրերին եկեղեցում երգելու։
Մանրամասն պայմանները ըստ համաձայնութեան։
Ռոճիկ 720 ր., սենեակ, ծառայ, վառելիք և ջուր։ Տարվայ վերջը կը տրվի 30 ր. ճանապարհածախս։
Յայտարարութիւններով դիմել դպրոցի հոգաբարձու բժ. Ց. Գիւլխանդանեանցին մինչև յուլիսի 20-ը Քիշնեվ, Земская больница.
659. 5—1

**Ձարչոյի** հայոց եկ. ծխ. միդասեան դպրոցի համար հարկաւոր է մի փորձված
**ՈՒՍՈՒՑԻՉ,**
որը աւանդելու է I և II բաժանմ. բոլոր առարկաները և ռուսաց լեզու։ Տրվում է 700 ր. ռոճիկ և մի սենեակ դպրոցին կից առանց վառելիքի։ Եթէ եկ. երգեցիկ խումբ պատրաստէ՝ առաւելութիւն կը տրվի։ Ցանկացողները թող ուղարկեն վկայականների պատճէնները, յիշելով՝ քանի տարեկան է և որտեղ է պաշտօնավարել։
Դիմել հոգաբարձ. նախագահ՝
Գրիգոր Ք. Գրիգորեանին
(օ. մ.) 661. 3—1

**ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ**
որ հմուտ է կար ու ձևի և ձեռագործի մէջ, որոնում է պաշտօն հայոց ծխական դպրոցներում։ Պատրաստ է և գաւառ գնալ։ Кирпичн. переулокъ д. № 11., кв. 4. Маиловой.
946. 3—3

**Սուլթան-Նուխու**
ծխական միդասեան դպրոցի համար հարկաւոր է մի թեմականաւարտ, երկու տարվայ և աւել փորձառութեամբ
**ՈՒՍՈՒՑԻՉ**
որին տրվում է 400 ր. ռոճիկ, սենեակ, լուսաւորութիւն։ Ցանկացողը թող դիմի՝ сел. Куткашенъ, попечителю училища Абраму Караджанцу.
Հոգաբարձութիւն
(օ. մ.) 654. 4—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հրատարակութիւն № 1
Գրերի գիւտի 1500-ամեակի եւ տպագրութեան 400 ամեակի առիթով լոյս տեսաւ
ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ
**„Ռուսական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսականի վրա"** ուսումնասիրութիւնը։
◆ Գինն է 75 ԿՈՊ.։ ◆ Վաճառվում է բոլոր հայ գրախանութներում։
(օ. մ.) 658. 6—1

**Սարուխանօվօ-Կուրինակի Ակցիօներական Ընկ.**
**Վարչութիւնը**
սրանով յայտարարում է, որ 1913 թ. 8% դիվիդենդի վճարումը, այն է՝ 4-ական րուբլի իւրաքանչիւր ակցիային, տեղի կունենայ յուլիսի 18-ից 1914 թ., առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 1-ը, Վարչութեան կացարանում—Բագու, Մօլօկանսկայա փող., № 4.
660. 2—1

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻԱԿ ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ
ԲԺՇԿԱԿԱՆ-ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԱՄՍԱԳԻՐ
**„ЖУРНАЛ-ЛЕЧЕБНИКЪ"-Ի**
1914 թւի երկրորդ կիսամեակի բաժանորդագրութիւնը (յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը)
Ամսագրի նպատակն է՝ առողջութեան պահպանումն և հիւանդութիւնների նախազգուշացումն.
Ամսագրի մէջ յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և ամենքին հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։
Ամսագրում տրվում են ամեն տեսակ տեղեկութիւններ բժշկական աշխարհից, օգտակար խորհուրդներ, զանազան տնային դեղեր և այլն... Բաժանորդներին տրվում են մանրամասն տեղեկութիւններ, հիւանդութիւնների դէպքում։
Բաժանորդագինը կէս տարվայ համար 1 ր. հետևեալ պրեմիաներով՝
1) Տարէց-օրացոյց-բժշկարան 1914 թ.
2) Բազմածնութիւն, արուեստական ամլութիւն և հակաբեղմնաւորական միջոցներ.
3) Волосы (մազերի և գլխի մաշկի հիւանդութեան գրքոյկ).
Բաժանորդների հասցէները փոխելը ՁՐԻ։
Ապառիկ և վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Հասցէն՝ Тифлисъ, Вознесенская № 8. Ред. «Журналъ-Лечебникъ».
Անցեալ 1913 թ. «Журналъ-Лечебникъ»-ի բոլոր համարները միասին առանց պրէմիաների արժէ 1 րուբ.։
(օ. մ.) 653. 10—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
**ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ**
№ 6—յունիս 1914 թ.
(160 մեծադիր էջ)
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
1) Պռնիկներ.—Ռուբէն, 2) Խայեամ.—Թարգմ. բնագր. Ց. Զ. Միրզայեան, 3) Կարօտ.—Լէյլի 4) Նաւակը.—Վ. Նուրեան, 5) Երազ.—Սիմ. Բաբեան, 6) Կառուցանող Սօլնէսս.—դրամա 3 արար. Հ. Իբսէնի, Թարգմ. Ց. Քոչարեան, 7) Ցուցեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից.—Ա-Դօ, 8) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 9) Ի. Գ. Ֆիխտէի սոցիալ-փիլիսոփայութիւնը.—Վ. Խորէնի, 10) Բաղիօնը և նրա յատկութիւնները.—Աւետիք Տէր-Պօղոսեան, 11) Երաժշտագէտ Նիկողայոս Տիգրանեան.—Պ. Մոճոռեան, 12) Սամուէլ Պշէբըշևսկի.—Սուրխաթեան, 13) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ 1) Aschot Iohannissian, Israel Ory und Armenische Befreiungsidee. Dissertation.—Հ. Մուսայէլեան, 2) Գիւի դը Մօպասան՝ I Ճարպագունդը, II Զարդը.—Ե. Ճ., 14) ԹԻՒՐՔԻԱ. Տաճկական ռեֆորմները.—Ռուբէն, 15) ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ. Պարսկաստանի զինուորական ուժերը.—Ֆարրօ, ՊԱՏԿԵՐՆԵՐ 1) Նիկողայոս Տիգրանեան, 17) Բովանդակութիւն, 18) Յայտարարութիւններ, 19) ՅԱՒԵԼՈՒԱԾ. Չեզար Լօմբրօզօ.—Հանճար և ցնորում. իտալ. թարգ. Ց. Ճ.։

**Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը:**
Բաժանորդագինն է՝ ՌՈՒՍԱՍՏԱՆ՝ տար. 7 ր., կէս տար. 4 ր., երեք ամիսը 2 ր. 25 կ.։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ » 24 ֆր. » » 14 ֆր. » » 8 ֆր.
«Նոր Հոսանքի» տարեկան այն բաժանորդները, որոնք լրիվին չեն վճարել ամբողջ տարվայ վճարը. թող շտապեն լրացնել, ամսագրիս կանոնաւոր առաքումը չընդհատելու համար։
Դրամ և նիւթեր ուղարկել՝ Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».
(հ. կ.) 656. 3—1

ՑՐՈՓԻՉՆԵՐ
ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժեներ Գ. Ջ. ԵԱՐԱԼԵԱՆ և ԸՆԿ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, № 9, սեփ. տուն
Տեօրէնի տելէֆօն № 9. Կառավարչի բնակարան 14—78.
Գործարանը պատրաստում է եւ կառուցանում տրանսմիսիաներ, ֆրիկցիօն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիւներ, շարժիչ-թեւեր, ատամնաւոր անիւներ, բէգուլիատորներ, փոկեր եւ այլն։
(ե.) 175. 25—13
ՋԵՌՈՑՆԵՐ

Բացված է 6 ամսեայ բաժանորդագրութիւն
(Յուլիս ամսվանից մինչև տարվայ վերջը)
Բ. ՏԱՐԻ 1914 Թ.
**ՄԱԽԼԱՍ**
Բ. ՏԱՐԻ 1914 Թ.
Գրական-երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
որը լոյս է տեսնում գոյնզգոյն ծաղրանկարներով։ Յայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուով։
6 ամսվայ բաժնեգինն է՝ Թիֆլիսում—1 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս—1 ր. 75 կ.։ Արտասահման—10 ֆր.։
1914 թ. յունվարից լոյս տեսած համարների հետ միասին Թիֆլիսում՝ 3 ր. դուրսը՝ 3 ր. 50 կ.։
Առանձին համարը Թիֆլիսում 7 կ. Թիֆլիսից դուրս 8 կ.։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала «МАХЛАСЪ», Петхаинская ул. № 20.
Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal «MAKHLAS».
Խմբագիր-Հրատարակիչ՝ Տիկ. ՍԱԹԵՆԻԿ ԼԱՇՔԱՐԵԱՆ
(ա.օ.) 584. 5—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный